

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՍՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԴԻ «ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԸ ԵՎ
ՆՐԱ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒԹՅԵՐԻ

Ա. «Բան իմաստության» պոեմի ուսումնասիրայիան վիճակը
և նեղինակի օգտագործած սկզբնադրյուրների որոշման հացը

Անի քաղաքի մշակութային կյանքի պատմության շարադրանքի, գնահատման և մանավանդ ամբողջացման գործը կարուտում է լուրջ ու համակողմանի հետազոտությունների։ Ինչպես արդեն նշել ենք¹, այն իր հաջող ավարտին կմոտենա, երբ առանձին-առանձին հետազոտված և հրատարակված կլինեն այդ մշակույթի բոլոր բնագավառները՝ իրենց համապատասխան կաթողներով։ Կամենալով օգտակար լինել այդ գործին, այս անգամ կզրադվենք Հովհաննես Սարկավագի «Բան իմաստության» պոեմի քննությամբ²:

Առաջին անգամ, ամփոփ ուսումնասիրությամբ, այն հրատարակել է Դ. Ալիշանը³ հիմք ունենալով ժամանակին Մարսվանում պահպող մի հին աղոթագիրք⁴, որն այժմ կորած է։ Հետագայում այդ բնագիրը, Զմմառի վանքի ծեռագործոց մեկում գտնվող նույն պոեմի մի նոր օրինակի բաղդատությամբ, հրատարակել է Ա. Արքահամյանը⁵։

Մասնագետները բարձր են գնահատել «Բան իմաստության» պոեմի գաղափարական և գեղարվեստական արժանիքները։ Հատուկ ուշադրություն է նվիրվել նրա մեջ հեղինակի դրսենորած առաջավոր հայացքին՝ բնության գաղափարի գնահատման առումով։ Դ. Ալիշանն այդ պոեմն արժեքավոր է համարել նաև «...իր մանր դիտողությամբ և զգացմամբ բնության տեսարանաց և օրինաց»։ Ըստ նրա՝ «բնապատում կը դնա զովությամբ հիշել այս սարեկին եղանակին հատկությունները, որք երբեմն Սարկավագին աղոթքը շփոթել կուտային»⁶։ Սույն դիտողություններին հաջորդել են Մ. Արեղյանի նախ՝ ամ-

1 Ա. Մնացականյան, Անիի բանաօտեղը Վարդան Անեցին և նրա ներքողը («Բանքեր Մատենադարանի», 1971 թ. 10, էջ 261—294)։

2 Այս թեմայով զեկուցում ենք կարդացել Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանում՝ 1980 թ. նոյեմբերի 13-ին։

3 «Բաղմավէկա», 1847, էջ 214—225. տե՛ս նաև Դ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ, գենետիկ, 1921, էջ 248—278։

4 Ա. Արքահամյան, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 319—324։

5 Դ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Բ, էջ 261։

փոփ⁶, ապա՝ ծավալուն՝ ուսումնասիրությունները։ Ըստ նրա՝ Հովհաննես Սարկավագի այդ պոեմի մեջ «Մեր իմաստասեր Բանաստեղծը, շատ աչող լուծել է կարևոր գրական խնդիրը, պնդելով, թե բանաստեղծը նմանում, հետեւ վում է բնությանը, իրականությանը։ Այս հայացքը, որով արժեքը տրվում է բնությանը, այս արդեն մի մեծ նորություն էր մեր գրականության մեջ և կարող էր ծագել միայն վերածնության դարում իրեն հետեանը այն նոր ոգու և ազատախոհության, որ առաջ էր եկել կյանքի մեջ»⁷։

Մ. Արեգյանին են հետեւ հաջորդ ժամանակների բոլոր մասնագետները ինչպես գրականագիտության, այնպես էլ փիլիսոփայության, դեղագիտության, նրաժշտագիտության և այլ բնագավառներում՝ իրենց արժեքավոր հետազոտությունները կատարելիս⁸։

Այժմ, երբ տասնամյակներ են անցել Մ. Արեգյանի տեսության վերջնական մշակումից հետո, հայագիտական միտքն ավելի լայն հունի մեջ է մտել և երեսն են եկել նոր փաստեր, հնարավորություն ու անհրաժեշտություն է ստեղծվել վերստին անդրադառնալու «Բան իմաստության» պոեմի գնահատմանը։

Ինչպիս հայտնի է, յուրաքանչյուր ստեղծագործություն անհամեմատ ճիշտ է բնկարվում, եթե հայտնի են դառնում նրա հիմքում ընկած սկզբնաղբյուրները։ Պետք է ասել, որ մինչև օրս ոչ միայն չեն բացահայտվել «Բան իմաստության» պոեմի սկզբնաղբյուրները, այլև շի բարձրացվել այն հարցը՝ եղե՞լ են այդպիսիք, թե՞ ո՞։ Այդ պատճառով էլ թվացել է, թե Հովհաննես Սարկավագն անձամբ է մտահղացել պոեմի մեջ քննված բոլոր հարցերը և ինքն էլ գտել նրանց պատասխանները։ Այսպես, ըստ Մ. Արեգյանի՝ բանաստեղծն ինքն է, որ «նախ մտածել է իր քերթվածի հիմնական գաղափարը—թեման և ապա ստեղծել դրա համար պատշաճավոր սյուժեներ—բանաստեղծի իրեն և Սարեկի տրամախոսությունը»¹⁰։ Հենց այս սկզբունքով էլ ուսումնասիրվել է քըննը ստեղծագործությունը։ Պետք է ասել, սակայն, որ, ինչպիս ցույց են տալիս մեր որոնումները, «Բան իմաստության» պոեմի հիմքում ընկած են Փիլոն Աղեքսանդրացու (Երրայեցու) երկերի շարքում դանվող «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» գործի գլխավոր գաղափարները, ինչպես նաև Փիլոնի և ուրիշ հեղինակների տարրեր ստեղծագործություններում առկա առանձին մտքերն ու գաղափարները։ Հովհաննես Սարկավագը, ելակետ ունենալով այդ աղբյուրներում առկա հայացքները, դարձացրել է դրանք և հասցրել նոր ընդհանրացումների։ Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում առավել որոշակի և համակողմանի պատկերացում կազմել «Բան իմաստության» պոեմի հեղինակի հայացքների վերաբերյալ։ Ըստ այսմ՝ Մ. Արեգյանի տեսության հիմնական կետերի մի մասը մնում է ուժի մեջ, իսկ մյուս մասը՝ ենթարկվում ճշգրտումների կամ՝ վերանայվում ամբողջապես։

6 Մ. Արեգյան, Համառոտաթյուն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության (խմբագիպ), Երևան, 1923, էջ 42—45։ «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1941, № 5—6, էջ 95։

7 «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 31—60։ «Հայոց նոր գրականության պատմություն», Բ, 1946, էջ 52—61։ «Երկեր», Դ, Երևան, 1970, էջ 72—82։

8 Մ. Արեգյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 82։

9 Համապատասխան աշխատանքների համեմատաբար լրիվ ցանկը արված է Ն. Թահմիզյանի «Հովհաննես Սարկավագ իմաստանքը և հայ միջնադարյան երաժշտական մշակությը» հոդվածում («Բանդմամբեկ», 1978, 3—4, էջ 356)։

10 Մ. Արեգյան, Աշխատանք, աշխատանք, էջ 75։

Քանի որ առաջադրված հարցերի քննությունը կապված է ամենից առաջ «Բան իմաստության» պոեմի բնագրի հետ, ուստի հարկ է առաջացնել զրադարձություններ այդ առումով առաջնահերթ հարցերի ուսումնասիրությամբ։ Դրանցից առաջինը վերաբերում է պոեմի բննական բնագրի ճշգրտմանը։ Այդ պոեմը վերևում հիշված երկու հիմնական հրատարակություններից բացի, լույս է տեսել նաև ուրիշ առիթներով։ Այդպիսիներից կարևորներն են Մ. Արեղյանի կատարած վերահրատարակությունը՝ Դ. Ալիշանի օրինակից¹¹, Ա. Մադոյանի և Գ. Անանյանինը՝ Ա. Արրահամյանի (որոշ վերանայումներով)¹²։ Ռուշիր նայելով բոլոր հրատարակություններով ներկայացրած բնագրերին, էական տարբերություններ ենք տեսնում Ա. Արրահամյանի կազմած բննական բնագրում՝ Դ. Ալիշանի հրատարակած օրինակի համեմատությամբ։ Եթ դա բննական է; Առկա են կարևոր լրացումներ, վերանայումներ։ Ցավոք, Ա. Արրահամյանը թույլ է տվել որոշ վրիպումներ, բնագրիր ճշգրտելու մասնակի սխալներ, իսկ նորահայտ օրինակի մասին չի տվել բավարար տեղեկություններ, որոնք առաջացնում են առանձին տարակուսանքներ։ Օրինակ, նրա օգտագործած Զմմառի ձեռագրի մասին մեզ ծանոթ մի ուրիշ տեղեկության համաձայն, պոեմի խորագիրն սկսվում է «Յօհաննու սուրբ վարդապետին ասացեալ...» բառերով¹³, մինչդեռ նրա կազմած բննական բնագրում «սուրբ» բառը բացակայում է։ Այնուաեւս, ոչ մի տարբնթերցում չկա պոեմի վերջին 2 հատվածի տողատակում։ Ուստի տարակուսելի է դառնում դրա ստույգության պարագան, արդյո՞ք այդպիսիք շեն եղել, թե՞ Զմմառի օրինակը չի ունեցել այդ հատվածները։ Ա. Արրահամյանի թույլ տված բնագրագիտական որոշ վրիպումներ նկատված և ուղղված են վերջին վերահրատարակության մեջ։ Այստեղ էլ, սակայն, տեղ են գտել մասնակի վրիպումներ։ Օրինակ, տպագրված բոլոր օրինակներում ունենք այսպիսի տողեր։

Աղքատ և անհամբար ընդ այսուն և դու ես կոչեցեալ,
Անհոգ և անարար, որպէս ուսաք ի Քրիստոսէ...

Վերջին վերահրատարակության մեջ անհամբար բառը փոխարինված է անհամբեր բառով։ Եթե դա մեխանիկական վրիպակ չէ, ապա կոպիտ միջամբություն է, որովհետև հեղինակի խոսքը թույլունների «աղքատ և անհամբար» լինելու մասին է, որի կապակցությամբ բանաստեղծն ասում է. «ուսաք ի Քրիստոսէ»։ Խոսքը վերաբերում է Դուկասի Ավետարանի հետեւյալ հատվածին. «Հայեցարուք ընդ ագուաւունս, զի ոչ սերմաննեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք, և աստուած կերակրէ զնոսա...» (ԺԲ, 24. հմմտ. Մատթեոս, Զ, 26)։ Հովհաննես Սարկավագն այդ բառի մի այլ առումն օգտագործել է նաև պոեմի վերջում, ուր սարյակն ինքն է ասում, թե թոշունները շունեն։

Ոչ Համբարս մըթերեալս ի լիութին հարկաւորացն...

Անհարկի համարելով բոլոր համանման հարցերին անդրադառնալը, նկատենք, որ մեր առջև բարձրացավ Զմմառի մատենադարանում եղած ընդօրինակը շունեն։

11 «Տեղեկադիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 53—58։

12 «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության թրեստոմատիա», Երևան, 1979, էջ 79—85։

13 Մ. Քեշիշյան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, Հետ. № 156, թերթ 136թ։

կության նոր օրինակ ստանալու և քննական նոր բնագիր կազմելու խնդիրը։ Այժմ մենք առաջնորդվում ենք այդ նոր բնագրով¹⁴։

Հարցի առավել համակողմանի պատկերացման համար մենք փորձել ենք նաև արդի խոսակցական լեզվով ներկայացնել «Բան իմաստության» պոեմի բնագիրը, որպիսին ցարդ գոյություն չունի։ Դա միաժամանակ օգնել է նրա ուսումնասիրության գործին, փոխադարձաբար շահելով նրանից¹⁴։

Այստեղ հարկ է առաջանում խոսել պոեմի բուն խորագրի և ենթախորագրերի մասին։ Այն ունի 6 հատվածներ դրված 5 ենթախորագրերի տակ։ Առանց ենթախորագրի է մնացել առաջին հատվածը։ Հարց է առաջանում։ մի՞թե հեղինակը մոռացել է այս պարագան։ Պարզվում է, որ ո՞չ այդ ենթախորագիրը կա, բայց միաձուլված է ընդհանուր խորագրի հետ։ Անջատելով դրանք միմյանցից՝ ստանում ենք բուն խորագրի և առաջին ենթախորագրի հետևյալ պատկերը։

ա) «Յովինաննու Սարկացի իմաստասիրի և վարդապետի ասցեալ բան իմաստութեան ի պատճառս զբուանաց»։

բ) «Առ ձագն, որ գաղօրանոցաւ նորա նոուաղէր բաղցրաձայն, որ կոշի սարիկ»։

Որ, իրո՞ք, երկրորդ մասը պոեմի սկզբի հատվածի ենթախորագիրն է, դա երեսում է նաև հաջորդ (երկրորդ) հատվածի ենթախորագրից, որն ասում է. «Չագն պատասխանէ»։ Իսկ ո՞ւր է հարցը, որի համար ստեղծվել է այդ պատասխանը։ Հարցն էլ, ահա՛, հենց մեր անջատած մասն է, որով բանաստեղծը դիմել է սարյակին («Առ ձագն...»)։ Բուն խորագիրն այդ շփոթությունից ազատվելուց հետո, ազատվում է նաև ստեղծված որոշակի տարտամությունից, որովհետև թողնում էր կրկնակի խորագրի տպավորություն։

Նկատելի է նաև մի ուրիշ անհարթություն։ Երեն չի արդարացնում պոեմի «Վասն լեշկեին», որ բանաֆն ի վերայ վարեցաւ» ենթախորագիրը, որովհետեւ նրա տակ դրված մեծածավալ հատվածի լոկ սկզբի 5 տողերն են համապատասխանում դրան։ Արդյո՞ք փոփոխություն չի մտել հեղինակային օրինակի մեջ։ Դժվար է ասել։

«Բան իմաստության» պոեմի ենթաբաժանումները կատարված են ըստ մշակված հարցերի, որոնց թիվը հավասար է 6-ի։ Անկախ դրանից, սակայն, կարող ենք ասել, որ պոեմն իր բովանդակությամբ բաժանվում է 2 մասի։ Առաջինում քննվում է այն հարցը, թե կենդանիների և մարդկանց ունեցած շնորհներից ո՞րն է առաջնադաս, իսկ երկրորդում ցույց են տրվում այդ երկու կողմերի կենցաղային պայմանների անհավասարությունն ու անարդարությունները։ Բանաստեղծը գտնում է, որ շնորհների (խոսելու, երգելու, նվագելու, բանաստեղծելու և այլն) առումով առաջնադասը կենդանիների շնորհներն են, այսինքն՝ բնության, իսկ կենցաղային հարցերում՝ անարդարացիները, բռնացողները՝ մարդիկ են։ Այս սուր հակադրությունների մեջ հեղինակը պաշտպանում է առաջինների, այսինքն՝ բնության իրավունքները։

Հստ այսմ, Հովհաննես Սարկավագն ստեղծել է երկու կերպար՝ ի դեմս Սարյակի ընդհանրացրել է բնության և ողջ կենդանական աշխարհի գաղափա-

14 Օգտվելով առիթից մեր խորին շնորհակալությունն նոր հայտնում գերազաւիվ Ա. Քեշիշյանին, որն ընդորինակեց և մեզ ուղարկեց նշված բնագիրը։

Առ Տե՛ս «Գաբրան», 1982, № 10, էջ 81—86։

բը, իսկ ի դեմս Վարդապետի՝ մարդկության։ Այս կերպարները նկատի ունեն իրենց ներկայացրած աշխարհների ամբողջ պատմությունը՝ սկսած արարշագործությունից և աստվածաշնչային պատկերացումներով ճանաշված անսահման հեռավոր ժամանակներից։ Վիճաբանությամբ տարվող քննությունը երկու դեսպոտ էլ ավարտվում է Սարյակի, այսինքն՝ բնության առաջնությամբ ու արդարացիությամբ։ Առկա են ստեղծագործական առումով լարված դրություններ, գործողություններ, հանգուցալուծումներ և բոլոր այն կարենոր տվյալները, որոնք հիմք են տալիս այդ ստեղծագործությունը համարել պոեմ։ Ամենայն իրավամբ կարելի է պնդել, որ այն ունի նաև վերջերգ։ Խոսքը պոեմի քառատող ամփոփման մասին է, որը դրված է հատուկ ենթախորագրի տակ։ Ուշադիր լինելիս կարելի է պոեմի առաջին հատվածը բնութագրել իրրե նախերգ, ուր հիմնականում ներբռողվում է գլխավոր հերոսը՝ Սարյակը։

Այժմ անցնենք «Բան իմաստության» պոեմի հիմքում ընկած ամենագլխավոր սկզբնաղբյուրին՝ «Յաղագս բան ունել...», երկին։ Քանի որ այն բաղկացած է երկու առանձին մասերից և հեղինակային պատկանելիության հարցով առկա են վիճելի հարցեր, ստիպված ենք նախ պարզություն մտցնել դրանց մեջ, որպեսզի խույս տված լինենք անխուսափելի շփոթություններից։

Բ. «Յաղագս բան ունել...» երկի նեղինակային պատկանելիության հարցը և «Բան իմաստության» պոեմի գաղափարական կապը նետ

Հայ հին թարգմանական հուշարձանների մեջ տուանձնահատուկ տեղ ունի «Յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ» երկը¹⁵, Այն դեռևս V դարում թարգմանվել է Հունարենից և այժմ փոխարինում է Հունարեն բնագրին, որովհետեւ վերջինիցու լոկ փշրանքներ են պահպանվել։ «Յաղագս բան ունել...» աշխատության գլխավոր արժանիքը նրա բովանդակությունն է։ Այստեղ հարուստ ու համակողմանի նյութեր են հավաքված կենդանական աշխարհի մասին, կապված նրանց՝ բանականություն ունենալու հարցի հետ։ Գիտական որոշակի արժեք ունեն երկում տեղ գտած համապատասխան մեկնաբանությունները, որոնք զերծ են կրօնական պատկերացումներից և առավելապես առնչվում են հեթանոսական առասպելներին։

Արդ, ո՞վ է «Յաղագս բան ունել...» երկի հեղինակը։

Հին սկզբնաղբյուրների, միջնադարյան մեկնաբանությունների, ինչպես նաև մասնագիտական ուսումնասիրությունների¹⁶ համաձայն, այդ աշխատության հեղինակը մ. թ. I դարի անվանի մտավորական Փիլոն Աղեքսանդրացին (Երայեցին) է, որի անունով էլ հրապարակվել ու մասսայականացվել է երկը։

Բայց ահա XX դարում հրապարակ է հանվել նոր կարծիք, որի համաձայն «Յաղագս բան ունել...» երկը պատկանում է մ. թ. ա. II-I դդ. գործից ու հեղինակ Մետրոդորոս Սկեփսացուն։ Այսպես, օրինակ, Կ. Տրեերը գրում է. «Հայուի է, որ մ. թ. ա. I դարի 60-ական թվականներին որոշ ժամանակ Տիգրան Բ-ի պալատում է գտնվել փիլիսոփա և ճարտառան Մետրոդորոս Սկեփսացին... նրան վերաբրում են Տիգրան Բ-ի մասին պատմական մի ստեղծագործություն։

15 «Փիլոնի Երայեցոյ Բանը երեք...», Վենետիկ, 1822, էջ 123—172։

16 Գ. Դժիգարյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 188—200; «Առնենի բաների Մատենադարանի», 1960, № 5, էջ 95—116։

ինչպես նաև տրամախոսություն՝ նվիրված կենդանիների բանականության հարցին: Վերջին ստեղծագործությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն պատճառով, որ նրա հայերեն թարգմանությունը հիշատակվում է մ. թ. I դարի սկզբների հեղինակ Փիլոն Աղեքսանդրացու երկերի շարքում: Այս ստեղծագործության հայերեն թարգմանության անհրաժեշտությունը կտրող է բացատրվել նրանով, որ այդ աշխատանքը Մետրոդորոսի կողմից գրվել է նրա՝ հայ թագավորի պալատում գտնված լինելու ժամանակ: Բացի դրանից, այդ թարգմանությունը հանդիսանում է փայլուն վկայություն այն բանի, որ մ. թ. I դարի սկզբում, այսինքն՝ Մետրոդորոսի մահից կես դար հետո, հայ հասարակությունը շարունակել է հետաքրքրվել այդ, ըստ էության, պիտական աշխատանքով¹⁷: Այս միտքը զրեթե նույն իմաստով կրկնել է Ա. Տեր-Պողոսյանը¹⁸: Շատ շանցած հարցին անդրադարձել է Գ. Սարգսյանը՝ նույն հեղինակին վերագրելով ևս մեկ աշխատություն: «Սովորույթունների մասին», «Անբան կենդանիների բանականություն ունենալու մասին», «Տիգրանի մասին»¹⁹: Այստեղ նորություն է Մարարոնի վկայած «Մովորությունների մասին» երկը²⁰:

Ինչպես երեսում է, Գ. Սարգսյանը շի խորացել հարցի մեջ, այսպիս կրացատեր, թե ինչո՞ւ ինքը երկու աշխատանքի փոխարեն նշում է Յ-ը: Ավելին, Ա. Տրեսերի հոդվածից բացի, հավանաբար նա կծանոթանար նրան թյուրիմության մեջ գցած Մ. Վելմանի աշխատությանը²¹, ինչպես նաև վերջինիս վաղուց արդեն հերքված լինելու փաստին²²:

Այսպիսով, կարող ենք ասել, թե «Յաղագս բան ունել...» երկը ինչպես որ վերագրվել է Մետրոդորոս Սկեփսացուն, այնպես էլ, շատ շանցած, համարվել է շփոթության արդյունք: Մեր որոնումները ևս համոզում են այդ իրողության մեջ, հիմք տալով շնենքել Կ. Տրեսերի, Ա. Տեր-Պողոսյանի և Գ. Սարգսյանի վերոհիշյալ հավաստիացումների վրա²³: Մնում է անդրադառնալ մի ուրիշ հարցի: Արդյո՞ք «Յաղագս բան ունել...» երկը սուսկ Փիլոնի ստեղծագործությունն է, թէ՞ նաև Աղեքսանդրի, որի անունը քանիցու հոլովվում է նրա էջերում:

«Յաղագս բան ունել...» երկը, ինչպես նկատված է, հիմնականում; երկի խոսություն է Փիլոնի և Լյուսիմաքոսի միջև. Փիլոնը, հենց սկզբից, իր խոսքն ուղղում է զբուցակցին՝ Լյուսիմաքոսին. «Յիշես զերիկեան բանոն, ո՞վ Լյուսիմաքոս, զորս Աղեքսանդրոս եղբօրորդին մեր պատմեաց, յաղագս այնորիկ՝ թէ ոչ միայն մարդիկդ, այլև անասուն կենդանիքդ բանի բաժին ունին»²⁴: Լյուսիմաքոսը նույնպես ներկայանում է որպես բարեկամ թէ՝ Փիլոնին և թէ՝ Ա-

¹⁷ Կ. Բ. Տրեվեր. Օчерки по истории культуры древней Армении. М.—Л., 1953, էջ 11: Միաւ է յտածել, թե այդ երկը, հայերեն է թարգմանվել Ի դարի սկզբում, որը հնարավոր չէր: Նրա թարգմանությունը կատարվել է V դարում:

¹⁸ Ա. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարդացումը Հայրատանում, Երևան, 1960, էջ 34—35:

¹⁹ «Պատմա-բանահրական հանդես», 1969, № 1, էջ 109, նաև «Դրական թերթ», 26 հունիսի, 1970 թ.:

²⁰ Ստրաբոն, География, XVI, 4, 16:

²¹ Wellmann, Hermes, Bd. LII, 1917, էջ 135.

²² «Paulus Realencyclopädie der classischen Altertumswissenschaft», Erste Reihe 30 Halbband, Շառուագարդ, 1932, էջ 1481—1482:

²³ Համապատասխան աղբյուրների թարգմանության հարցում մեղ օգնել են Ս. Վարդանյանը և Գ. Արգարյանը, որոնց և հայտնու ենք մեր շնորհակալությունը:

²⁴ «Փիլոնի երբայիցոյ Բանք երեք», էջ 123:

զեքսանդրին, ընդգծելով վերջինի ոչ միայն հեղինակային ընդունակությունները, այլև անձնական առաքինությունները։ Երբ Փիլոնն ու Լյուսիմաքոսը հասունացնում են Աղեքսանդրի համապատասխան տեսության և դրան նվիրված նրա ստեղծագործության քննությանն անցնելու հարցը, այդ ժամանակ ժառան (սպասավորը) Փիլոնին է մատուցում Աղեքսանդրի երկը։ «Ծառայի միոյ՝ որում դէպ եղեւ անդ կալ յետոյ կողմանէ ո՞շ հեռի ուրեք, զիրս կարկառեալ, առեալ ընթեռնոյր Փիլոն»²⁵։ Այստեղ զրված է լրացուցիչ խորագիր։ «Ճառ Աղեքսանդրի Յաղագս կարծեցեալ բանի անբանից»։ Ապա ներկայացված է այդ ճառն ամբողջությամբ, որն էլ փաստորեն բռն երկն է՝ հայտնի «Յաղագս բան ունել...» խորագրով։ Ճառի վերջում Լյուսիմաքոսի նկատողությունն է. «Այսորիկ են, ո՞վ պատուական Փիլոն, զորս Աղեքսանդրոս եղբօրորդին մեր շարագրեաց, և ի մէջ անցեալ եցոյց»²⁶։ Մրան հաշորդում է Փիլոնի և Լյուսիմաքոսի հարցազրուցը, ապա Փիլոնի ընդարձակ մեկնաբանությունը՝ նվիրված Աղեքսանդրի երկին։

Այս առումով կարենոր նշանակություն ունի նաև հետեւյալ իրողությունը։ Այն տպագիր հատորը, որում զետեղված է «Յաղագս բան ունել...» երկը, բռվանդակում է ևս երկու ուրիշ աշխատություն, որոնք նույնպես կազմված են Աղեքսանդրի անվան հետ։ Ահա այդ երեք ստեղծագործությունների խորագրերն՝ ըստ զրքում ունեցած հաջորդականության։

- ա) «Փիլոնի յաղագս յառաջախնամութեան առ Աղեքսանդրոս»²⁷;
- բ) «Փիլոնի յաղագս նախախնամութեան (առ Աղեքսանդրոս)»²⁸;
- գ) «Փիլոնի յաղագս բան ունել և անասուն կենդանեացդ (ըստ Աղեքսանդրի»²⁹։

Ուշագրավ է, որ հայերենի թարգմանիչը կամ մեկնիչը հիշում է Փիլոնի մի ուրիշ զիրք ևս, «զոր Տերունեան անուանէ զիր», որի մասին ասված է. «և զայս ևս առ Աղեքսանդրոս ուսումնական և հարցանող, և առ Լիւսիմաքոս ազգային իւր առնէ, զոր և եղբայր իսկ ասէ իւր. և զերկոսին աշակերտէ ի հաւանութիւն...»³⁰։

Այս և այլ փաստեր հիմք են տալիս Աղեքսանդրին պատմական անձնավորություն համարելուց բացի, ճանաշել նաև որպես «Յաղագս բան ունել...» երկի մեջ առկա «Ճառի» հեղինակ։ Մանավանդ, որ նա և Փիլոնը պաշտպանում են հակառակ հայացքներ։ Այսպես, Աղեքսանդրը գտնում է, որ կենդանիներն օժտված են բանականությամբ, իսկ Փիլոնն առարկում է, պնդելով, թե կենդանիներն առաջնորդվում են լոկ բնազրով։ Թե մեկը և թե մյուսը բերում են բազմաթիվ և բազմապիսի օրինակներ կենդանիների կյանքից (իսկ Փիլոնը նաև բուսական աշխարհից) ու մեկնաբանում զրանք՝ ամեն մեկն ըստ յուր հայացքի։ Դրանով էլ «Յաղագս բան ունել...» երկը դարձել է կենդանական և բուսական աշխարհներին վերաբերող կենսափորձային իմացությունների մեջահարուստ գանձարան։

Այսպիսով, կարող ենք ասել, որ «Յաղագս բան ունել...» երկը բաղկա-

25 Նույն տեղում, էջ 126։

26 Նույն տեղում, էջ 161։

27 Նույն տեղում, էջ 1—43։

28 Նույն տեղում, էջ 44—121։ Այս և նախորդ գործը նույն երկի 2 մասերն են։

28 Նույն տեղում, էջ 123—172։

29 Նույն տեղում, էջ 31։

ցած է երկու շերտից, որը ցարդ որոշակիորեն չի տարրերակված: Նրա առաջին շերտը Փիլոնի եղբորորդու՝ Աղեքսանդրի շարադրանքն է՝ կենդանիների բանականություն ունենալու մասին, իսկ երկրորդը՝ Փիլոնի մեկնարանությունն է՝ նվիրված այդ երկին: Գեթ հայ մատենագրության մեջ հարցի այդ կողմի մասին պարզորոշ պատկերացում չկա: Ավելին, հաճախ Աղեքսանդրի նշված աշխատությունից վկայակոչված փաստերը ներկայացված են Փիլոնի անոնով, որ ճիշտ չէ:

Ահա այդ երկից է, որ հիմնականում օգտվել է Հովհաննես Սարկավագը՝ իր «Բան իմաստության» պոեմը գրելիս: Նախքան բուն փաստերին դիմելը, պատասխաններ այն հարցին, թե արդյոք կարո՞ղ էր բանաստեղծը ծանոթ լինել Աղեքսանդրի և Փիլոնի վերոհիշյալ երկին: Այս առումով ուշագրավ է հետեւյալ փաստը: Ինչպես ժամանակին կուահել էր միջնադարյան գրչուհի Բրաբիոնը, Փիլոնի անունով հայտնի «Յօթնագրեանքի» մեկնությունները կատարված են Հովհաննես Սարկավագի կողմից: Գ. Գրիգորյանը, խորանալով այս հարցի ուսումնասիրության մեջ²⁹, հաստատել է Բրաբիոնի կարծիքը և միաժամանակ արել այսպիսի դիտողություն: «Հայտնի է, որ Սարկավագի «Բան իմաստութեան ի պատճառս գրօսանաց առ ծագն, որ զաղօթանոցաւ նորա ճուեղէր քաղցրածայն, որ կոչի սարիկ» շափածո տրակտատի մեջ արտահայտված առաջատար ու հիմնական գաղափարներից մեկն էլ այն է, թե սարդակ թունակի երգեցողության արվեստը բնածին է, ոչ թե սովորովի, ինչպես մարդկայինն է: Նույն այս միտքը արտահայտված է պարզ ու որոշակի կերպով Փիլոնի մեկնությունների մեջ: Այստեղ կարդում ենք. «Մի՞թէ արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն...»³⁰: Խոսքը՝ Հովհաննես Սարկավագի կատարած մեկնության մասին է: Յավո՞ք, Գ. Գրիգորյանը շի խորացել այս հարցում, շնչելով անգամ, թե Հովհաննես Սարկավագի մեկնարանած այդ միտքը գտնվում է «Յաղագս բան ունել...» երկում: Դա նրան շի հետաքրքրել և նրա նպատակից դուրս է եղել:

«Բան իմաստության» և «Յաղագս բան ունել...» երկերում առկա կասի մասին՝ միմյանց լրացնելով վկայում են նաև հետեւյալ փաստերը: Ս. Արեգատյանը դիտել է, թե «Իավիթը ծանոթ է Փիլոն Աղեքսանդրացու «Վասն բան ունել անասուն կենդանեաց» (խոսքը՝ «Յաղագս բան ունելի...» մասին է—Ա. Մ.) աշխատությանը, որը հայերեն է թարգմանվել V դարում³¹: Իսկ Ա. Մաղոյանը և Հր. Միրզոյանը ցույց են տվել, որ Հովհաննես Սարկավագն է եղել Յավիթ Անհաղթի նշված երկի մեկնիշը: Ավելին, նրանք, մատնացույց անելով այդ մեկնության և «Դավիթյան սահմանումների» կապը, վկայակոշում են, «Բան իմաստութեան» պոեմի «Վասնդի օտարացաք ի բնականէն» նշանարանը³²:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Հովհաննես Սարկավագը ոչ միայն ծանոթ է եղել «Յաղագս բան ունել...» երկին, այլև, ի շարս Փիլոնի այլ ստեղծագործությունների, նա մեկնարանել է նաև այդ գործը: Ավելին, մասնագետներն

29 Գ. Գրիգորյան, Հովհաննես Իմաստաերի փիլիսոփայական հայացքները («Պատմա-բանասիրական հանգես», 1958, № 3, էջ 188—200): Նույնի՝ «Փիլոն Աղեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները» («Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 95—116):

30 «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 102:

31 «Դավիթ Անհաղթ», Երևան, 1980, էջ 322:

32 «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 1, էջ 119:

անուղղակի փաստարկումներով արդեն հուշում են «Յաղագս բան ունել...» երկի և «Բան իմաստության» պոեմի կապերի առկայության մասին:

Ընդհուպ մոտենալով մեզ հետաքրքրող փաստերի քննությանը, նպատակահարմար ենք գտնում ծանոթությունն սկսել «Յաղագս բան ունել...» երկի հետևյալ տողերից, որոնք գտնվում են Աղեքսանդրի հառում. «Քանզի կեռնեխք (լս. սարիկը) և տատրակք (իր տորդիկք) և ծիծառնուկք (որպէս սոխակք) ոչ միայն երգել բնաւրեալ են, այլև յօդաւոր ձայնի երգեն, մինչ զի և ասել և զրել կարել զնուագացն բառ: Եւ եթէ կամեսցի ոք հաստատուն լսելիօր ուսանել, փոքր մի ի մերձաւոր դրախտիցդ մի՛ դանդաղեսցի երթալ՝ յորս նշմարտութեամբ են երածշտակի ամենազան հաւուց, ոք ի միասին հնչեն. Եստ խառնման իմն յարմարութեան հակառակարարառառ նուազեն երգս»³³, թվում է, թե Հովհաննես Սարկավագն իր պոեմը դրելիս առաջնորդվել է հենց այս տողերով: Թէ այստեղ և թե պոեմում հատուկ ուշադրություն է հատկացված թոշունների երգելու շնորհքին: Երկու դեպքում էլ առաջին հերթին հիշվում է կեռնեխ-սարյակ թոշունը³⁴, որին պոեմում տրվել է գլխավոր հերոսի դերը: Թէ՛ Աղեքսանդրի նշված տողերում, թէ՛ Փիլոնի պատասխանի մեջ և թէ՛ պոեմում խոսք կա թոշունների ձայնի հոդավորության մասին: Էստ Աղեքսանդրի՝ նրանց ձայնը հոդավոր է. «յօդաւոր ձայնիւ երգեն», իսկ ըստ Փիլոնի՝ ո՛չ, «Քանզի կեռնեխք և ագռաւք և պապկայք և ոք միանգամայն հոմանունք, զի թէպէտ և զանազանագոյն բարրառեսցին, յօդաւոր ո՛չ երրէք և ոչ իւիք ձայն կարասցեն հանել» (էջ 171): Այս հարցում Հովհաննես Սարկավագը, հետեւելով հանդերձ Աղեքսանդրին, չի էլ ժխտում Փիլոնի կարծիքը, ուստի դիմելով Սարյակին՝ նրան և՛ «յօդածայն վերծանող» է համարում, և՛ «անյօդ ձայնիւ» վարդապետող.

Մի՛ պատճառեր զանբանութիւն, դո՛ւ, յօդածայնը վերծանող,
Անյօ՛դ ձայնիւ վարդապետեա և ստացի՛ր զիս աշակերտ...³⁵,

33 «Փիլոնի երգայեցոյ Բանք երեք...», Աննեակ 1822, էջ 128—129:

34 Աղեքսանդրի տողերում «Ենենեխք (լս. սարիկը)» արտահայտությունից երևում է, որ օգտագործված ձեռագրի լուսանցրում կեռնեխք բառի դիմաց տրված է եղել «սարիկը» բացատրությունը: Համապատասխան բացատրություն կա նաև Հայկազյան բառարքում. «Սարիկ թոշունն բաղցրածայն նման ագռաւու փոքրկան», կարդում ենք կեռնեխ բառահողվածում («Նոր բառգիրը Հայկազեան լեզուի», Ա, 1979, էջ 1089): Որոշ բառարաններում կեռնեխ-սարյակին տարբերում են կեռնեխ-ճարեկից, բայց երկուսին էլ համարում բաղցրածայն երգողներ: Մեղ համար կեռնեանաբանական այս նրություններն չական նշանակություն չունեն: Կարևորն այն է, որ Հովհաննես Սարկավագը նկատի է առել Աղեքսանդրի և Փիլոնի նկատի առած կեռնեխ-սարեկին: Ծվ եթէ բանաստեղծը զբել է. «Առ ձագն... բաղցրածայն որ կոչի սարիկ», ապա Հայկազյան բառգրում կա, անկախ նրանից, «կեռնեխը» մեկնաբանված է: «Սարիկ թոշունն բաղցրածայն» դարձվածքով: Հ. Տաշյանն ունի այսպիսի տողեր. Բարսեղ կեսարացու մոտ հանդիպում է «սարիկ առ ի նշանակելոյ զտարմահաւ... իսկ յետինք գրեն սարեակ, սարեկ առ ի նշանակել նաև զկոչեցեալն «կեռնեխ», հմտ. նոր ճարեկ» (Ռևումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1020, էջ 621—622):

35 Գիտական առումով բանաստեղծը հավանաբար համածայն է եղել Փիլոնի հետ: Այս տեսակետից ուշագրավ է նրա հետեւյալ մեկնությունը՝ Փիլոնի համապատասխան մտքերից մեկի՝ կապակցությամբ, որի համածայն կենդանիների «ձայնն մի ոլորակ ունին՝ ամենն անյօդ, զի և ոչ իրեն փողից և քնարաց չեն, որ թէպէտ անյօդ են. այլ զօրութիւն բանի դեմք անյօդ... և զանասնոցն ձայն զետ փողոյ և քնարի կու ասէ. զի ձայնին վերացրեան միաժամ ունին անաստմբ զետ զփող և զքնար, ապայ երկուքն անյօդ են, զի բառին չեն ի յօդել և նշանակել՝ որպէս ոլորա-

Այսպիսով, ոռքան խոռանում ենք փաստերի մեջ, այնքան ամուր հող է ստեղծվում մեր կառծիքի համար: Ուստի առայժմ, թեկուզ պայմանականորեն անվիճելի համարելով դա, ուշադրություն հրավիրենք մի ուրիշ փաստի վրա: Պարզվում է, որ «Յաղագս բան ունել...» երկից հնում, բնականաբար, օգտվել են ոչ միայն հայ հեղինակները, այլև՝ հույն: Հովհաննես Սարկավագն էլ, ժանոթ լինելով նաև վերջիններիս համապատասխան գործերին, երբեմն օգտվել է նրանցից: Այդ հեղինակներից են, օրինակ, Գրիգոր Աստվածաբանը³⁶, Բարսեղ Կեսարացին³⁷, Հովհաննես Ռոկերերանը³⁸ և ուրիշներ: Հանգամանալից զնությունը ցույց է տալիս, որ սխալ կլիներ կարծել, թե Հովհաննես Սարկավագը վերջիններիս միջոցով է օգտվել «Յաղագս բան ունել...» երկի մտքերից, մանավանդ, որ ինչպես տեսանք, նաև հանդիսացել է նուև ոյդ երկի հայ մեկնիշներից մեկը, իսկ պոեմում իշխում են Աղեքսանդրի և Փիլոնի մտքերը:

Այժմ անցնենք «Բան իմաստության» պոեմի ըննությանը՝ ըստ «Յաղագս բան ունել...» երկի և օժանդակ մյուս սկզբնաղբյուրների: Նկատենք, որ այսուհետեւ նրանց կապերի առացուցման գործն այլևս հատուկ հարց չենք դարձնելու, որովհետեւ այն ինքնարերաբար լիովին բացահայտվելու է շարադրանքի ընթացքում:

Դ. «Բան իմաստության» պոեմում բարձրացված հարցերի առաջին խումբը

Որպեսզի առհանձարակ ճիշտ հասկանանք «Բան իմաստության» պոեմի բուն էությունը, ամենից առաջ պիտի ուշադրություն դարձնենք նրա գործող անձանց և հատկապես հերոսի կերպարի վրա, որոնց մասին ընդհանուր ակնարկ արվեց վերեւում: Մինչև օրս այնպես է ընդունվել, որ Սարյակը բնական թոշունի կերպար է: Մ. Արելյանը գրում է, թե «Այս երկն իր նյութով բանաստեղծի և սարեկ թոշունի միջև փոխանակված մի տրամախոսություն է», որի մեջ թոշունը ներկայացուցիչն է արտաքին ընության»³⁹: Չնայած նա քիչ հետո գրում է, թե «Զկա քերթվածի սկզբում այլաբանություն, այլ մեր առաջ երեսում է իրական երգեցիկ թոշունը», բայց նորից գտնում է, որ բանաստեղծը «Ա իրական թոշունի մասին է երգում, և իր տեսության»: Ուշադիր հետևելիս կարելի է կուա՞նել, որ այլաբանություն հասկացությունը նա չի տարածում Սարյակի վրա, այլ պոեմի միջին և վերջին մասերի, որովհետեւ նա ճիշտ էլ թոշնիկին դիմում է իրրե բնական սարյակի: Եթե անգամ ընդունենք, թե ինչ որ եղանակով նա այդ հասկացության տակ նկատի է առել նաև Սարյակին, միևնույն է, դրանից հարցի էությունը չի փոխվի, որովհետեւ նրա ուսումնաբիրության մեջ ո՛չ մի բառ չկա Սարյակի այլաբանական կերպարի վերաբերյալ, ել չենք խոսում այդ հարցի գիտական քննության մասին: Անհարկի կլիներ փաստարկել, որ

կան կու նմանեն մարդոյ ձայնի և դյուրափոփոխ զյողաւորին կու ասէ զմարդոյն, որ նշանակող է, որ լսօղքն կու լսեն միապէս, զփողոյն և զանանոցն չեն ի լսելիս միապէս» (Զեռ. № 2595, թերթ 251ա):

36 Զեռ. № 61, թերթ 103թ-105թ և այլն:

37 «Մերոյն Բարսղի... Ճառը», Վենետիկ, 1830, էջ 5, 9, 62, 165—169, 187—190 և այլն:

38 «Յովհաննես Ռոկերերանի Մեկնություն Բղոյոց Պաւլոսի», Ակ, Վենետիկ, 1862, էջ 430—432 և այլն:

39 Մ. Արելյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 75:

այս հիման վրա էլ բոլոր հաջորդ մասնագետները Սարյակին դիտել են իրեն իրական թոշուն:

Այդ պատկերացումը, ինչպես պարզվում է հիմա, կարու է վերանայման: Բանն այն է, որ պոեմի մեջ Սարյակի կերպարը սկզբում է միայն քնական թոշունի գաղափարի գեղարվեստական վերարտադրություն, իսկ հետո վերանում է դերբնական էակի: Եթե հետեւ լինենք նրա քնավորությանը, այսինքն՝ աստվածաբանական ճոխ դիտելիքներին, անվերջանալի քարոզներին, իր իմացություններով Վարդապետին ուսուցանելուն, ապա նույնիսկ իսկական թոշունի հետ նրա ունեցած կապի փաստարկումը կդժվարանա, որովհետև պոեմի սկզբնամասում էլ առկա են ազգարանական տարրեր: Օրինակ, Սարյակի զրվատանքում օգտագործած «Հակող», «պաշտօնասէր» բառերը՝ աղոթողի և կրոնական ծեսերի սիրահարի իմաստներով ննթաղրել են տալիս ոչ իրական թոշուն: Այժմ, երբ պարզվում է Սարյակի կերպարի կապը Աղեքսանդրի նկատի առած իսկական սարյակի գաղափարի հետ, տարակուսանքը շքանում է, մանավանդ, որ պոեմի առաջին հատվածում, իրոք, խիստ հմտորեն նկարագրված է քնական սարյակ: Պոեմի երկրորդ հատվածից է, որ բանաստեղծի հետապնդած ստեղծագործական նպատակների թելագրանքով, թոշունը կերպարանափոխվում է՝ գառնալով գերբնական էակ, որպեսզի պատասխանի հեղինակին հուզող հարցերին: Կարճ ասած՝ Սարյակը բանաստեղծն է, նրա գաղափարախոսը, նրա ներկայացուցիչը՝ պոեմում.

Գալով պոեմի մյուս գործող անձի՝ Վարդապետի կերպարին, պիտի ասել, որ նա մարդկության ներկայացուցիչն է՝ մերթ բանաստեղծի, մերթ Վարդապետի անվան տակ: Այստեղ էլ, անշուշտ, առկա է հեղինակը, բայց ինքնաքննադատվողի դերում: Եթե խոսելու լինենք միջնադարի բառապաշտությունը, ապա կարող ենք առել, որ Սարյակը երեան է գալիս հոգու, իսկ ԲանաստեղծՎարդապետը՝ մարմնի դերով: Ռւստի առաջինը և անմեղ է, և իրավացի, և աստվածաբան: Երկրորդը, համաձայն է նրա սկզբունքներին, մեղավոր է իրեն Աղամի ժառանգ, ուստի իր կյանքը նվիրաբերել է այդ մեղավորությունից աղատվելու միջոցներին, որպեսզի կարողանա՝ Զուգել մեծաց և անուանեաց, նաև վերին իսկ զօրութեանցն...»: Աչա այս եղանակով, աստվածաշնչային պատկերացումների օգնությամբ, հեղինակն առաջ է տանում իր կերտած երկու կերպարների վիճաբանությունը, միաժամանակ հետևողականորեն արտահայտելով իր հիմնական գաղափարները, բնության ուժերի գնահատման և պաշտպանության մասին:

Արդ, որո՞նք են այդ հիմնական գաղափարները՝ պոեմի առաջին հարցախմբում: Մ. Արեգյանի ուսումնասիրության մեջ արդեն բացահայտված է, թե պոեմի «Թեման՝ արվեստի ծագման խնդիրն է, հատկապես երաժշտության ու բանաստեղծության, որոնք երկուսը հնում սերտ կապված են եղել միմյանց հետ, բանաստեղծը երգի և խոսքերը, և եղանակը հորինողն էր, և երգովը, այսինքն՝ կատարողը⁴⁰: Միանդամայն ճիշտ ընդհանրացում, որը, սակայն, շպիտի տարածվի պոեմի ողջ թեմայի վրա, այլ՝ սկզբի մասի, որովհետև երկրորդ մասի թեման վերաբերում է ուրիշ հարցերի: Այնուհետև, ճիշտ չէ, որ պոեմի մեջ առկա խոսելու (բանաստեղծության) և երգելու (երաժշտության) հարցերը, միասին են քննվել, որովհետև դրանք հեղինակի կողմից դիտված են

⁴⁰ Նույն տեղում, էջ 72—73:

իբրև տարբեր հարցեր: Պատճառն այն է, որ Հեղինակը հետևել է Աղեքսանդրին նաև այս հարցում, իսկ Աղեքսանդրը նույն հարցերի կապակցությամբ (սոսկ գիտական նկատառումներով) ասում է. «Չայնի կրկին տեսակ է, է՛, որ յասել է, և է՛, որ յերդիլ» (էջ 128): Ըստ այսմ էլ Հովհաննես Սարկավագը նախ զրկել է «ասելու» մասին (տող 29—59), ապա «երգելու» (տող՝ 60—72): Ուստի փորձենք դրանց ծանոթանալ զոկ-զոկ:

Պոեմի առաջին հատվածում բանաստեղծը դրվատելով Սարյակի ֆիզիկական հատկությունները, անցնում է նրա հոգեոր առաքինություններին (խոսելու, երգելու, պարելու և նվազելու), ապա շեշտը զնում խոսելու վրա.

Սքանչելի ի քեզ խորհուրդ, որոց ընտրեաց Տէր յաշխարհէ,
Բայց շառեր դու զօրութիւն, որով դիւրաւ խօսին լեզուք.
Իշ մըտեր ի վերնատուն՝ ընդ հրաւիրեալորն յաւետիսն.
Արդ ուստի՝ իցէ քեզ խօսել յայլալեզուս և լրնտանիս.
Ե՛կ,ուսո՞ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս...

Ինչպես նկատել են Դ. Ալիշանը և Մ. Արեգյանը, խոսքն այստեղ Հոգեզալքույան առասպելի մասին է, բայց որի առարյալները Վերնատանն արժանանում են Սուրբ Հոգու գալուստին և պարզեալովում հրեղեն լեզուներով։ Այդ լեզուների շնորհիվ նրանց խոսքը դառնում է բոլորին հասկանալի, տարբեր ազգերի ներկայացուցիչները միաժամանակ հասկանում են նրանց ու զարմանում։ Բանաստեղծը հիշեցնելով այս առասպելը, Սարյակին հարց է տալիս, չէ՞ որ դու Վերնատանը շես եղել, ինչպես է, հապա, որ խոսում ես բոլորին հասկանալի լեզվով։ Այսպէս ասելով նա նկատի է առել այն իրողությունը, որ թուշուներին լսել ու հմայիել են և թոշունները, և մարդիկ։ Համապատասխան միտքը գալիս է Աղեքսանդրից, այլ Հեղինակներից և մանավանդ բանաստեղծի սեփական դիմարկումներից։ Դա արժեքավոր և իր ժամանակի համար նոր ու առաջավոր միտք է՝ առաջին անգամ մշակման նյութ դարձած քննվող պոեմում։ Ուշագրավ է, որ այն կատարյալ լեզուն, որ կա «Գործը առաքելուց» և բացատրվում է կրոնական առասպելով, Հովհաննես Սարկավագի կարծիքով՝ կա բնության մեջ։ Եվ նա զույց է տալիս Սարյակի օրինակով։ Առավել ուշագրավն այն է, որ պոեմի մեջ ուսանելու հույսն ու ձգտումը կապված է ոչ թե առաքյալների հետ, այլ՝ Սարյակի։

Ե՛կ, ուսո՞ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս...

Այդ առումով էլ հիմք կա Աղեքսանդրի ճառում։ Եյտեղ Հեղինակը հետևողական համոզմունքով խոսում է ոչ միայն թոշունների, այլև բոլոր մյուս էակների բանավկանություն ունենալու մասին։ Նրանցից սովորելու (ուսանելու) վերաբերյալ էլ ակնարկ կա վկայակոչված «Կեռնեխը...» հատվածում։ Պիտի միաժամանակ շմոռանալ, որ դեռևս Փիլոնն է ժմատել Աղեքսանդրի հայացքները, իսկ քրիստոնեության հաջորդ դարերն է՛լ ավելի են խորացրել այդ մերժումը։ Ուստի Հովհաննես Սարկավագը, ուշագրություն հրավիրելով բնագիտական ճշմարտության վրա, իբրև հոգեոր առաջնորդ, փորձում է տալ նաև իր բարձրացրած հարցի բացատրությունը, որը, ինչ խոսք, պիտի թևածեր կրոնական պատկերացումների ոլորտում։ Ըստ այդմ էլ, այն հարցին, թե ինչո՞ւ Սարյակի խոսքը լիարժեք է, իսկ մարդունը՝ կիսակատար, բանաստեղծի կամքով Սարյակը պատասխանում է Աստվածաշնչի դրաւյթների համաձայն։ Ելակեաը Աղամի

մեղքն է, որի պատճառով մարդկությունը զրկվել է երկնային դրախտից և վտարվել այս աշխարհը: Այդտեղ էլ, սակայն, նրանք դրաղվել են աշտարակաշինությամբ և պատժվել՝ աստվածապարպե լեզուն կորցնելով և տարրեր լեզուներ ստանալով: Այդ պատճառով մարդկային լեզուն կիսակատար է, իսկ թոշուններինը՝ ո՛չ, որովհետեւ նրանք հավատարիմ են մնացել աստծու պատգամներին, չեն մեղանչել և չեն զրկվել իրենց ստացած նախնական շնորհներից:

Ո՞չ մեղայ, ո՞չ մահացայ, ո՞չ կորուսի զոր ընկալայ,
Հաւանղըն պահեցի և տուղանաց ո՞չ ըղզացի.
Չշինեցի՛ ես աշտարակ, զի լողնակի դարձեալ մեղայց
Կոս ընկալայց ըղպատուհաս՝ նըմանապէս բանաւորացը՝
Միոյ շրթան և բարրառոյ բաղմատեսակ բաժանելոյ...⁴¹:

Այսպիս, ուրեմն, դրվատված երկույթը՝ թոշունների խոսքի կատարելության մասին գալիս է զիտական նիմեներից ու փորձերից, իսկ նրա բացատրությունը՝ Աստվածաշնչից: Կարեորն առաջինն է, և հենց դրանով էլ Հովհաննես Սարկավագի պոեմում տեղ գտած այդ հարցը անհական ժամանակների ու միշտավայրի աշխարհայացքային մեծարժեք նվաճում-նորություններից մեկն է:

Այսպիսին է խոսելու կատարյալ արվեստի հարցը՝ քննվող պոեմում:
Հովհաննես Սարկավագը, ըստ Աղեքսանղրի նշումի («Զայնի կրկին տեսակ է... յասել... յերգել»), պոեմի երրորդ հատվածում անցնում է երգելու շնորհը քննությանը: Այստեղ թոշունին տրվելիք հարցը բացակայում է, բայց այն ենթադրվում է վերջինիս պատասխանից և հեղինակի խոսքի մեջ եղած համապատասխան ակնարկից: Ըստ երեսույթին, բանաստեղծն անհարկի է համարել լեզվի կապակցությամբ տրված հարցը նորովի կրկնել երգի համար: Հատվածն սկսվում է թոշունի ուղղակի պատասխանով.

Հայս ասաց պատճառ բաղմանըւադ եղանակացն
Թոշունն քաղցրախօս ի հարցանելըն մեր ըղնա...
Ռւայ ես դեպերմամբ, ևս ի բաղմաց ամաց հետէ,
Զի տքքնեցայ զօր ամենայն և ըզդիշերն բովանդակ՝
Առ իմաստըս ցանկութեամբ, նա և սիրովն, որ ա՛ռ հանձար...

Մասնագետները մինչև օրս այս մեծարժեք փաստը ճիշտ չեն ընկալել, ուստի և այն շեն գնահատել: Նրանց այնպես է թվացել, թե այդ տողերը վերաբերում են բանաստեղծին: Այսպիս, Դ. Ալիշանի կարծիքով, Հովհաննես Սարկավագը «...իր անխոնչ ուսմանց զբաղելուն համար կրսէ հոն. Ռւայ և

41 Գրիգոր Նարեկացին Հոգեգալստյան տաղերի մեջ անդրադաել է լեզվի հարցին, սակայն, շնորհ է նրա զիտական զրվածքից: Ուշադրավ է, որ նա առասպելի հրեղին լեզուների օգնությամբ առարյալների ստացած ոյտությունները դիմում է իրեն աստծուց ստացված մարդկային երբեմնի ընդհանուր միասնական նախալեզվի վերականգնման միջոց:

Աստանաւր ծագեաց լոյս աւետեաց կհնաց...
Հոգին Սուրբ Հընչեաց բաղմաց լեզուս ազգաց աղանց ի ձայն...
Բարբառ ժողովաւզ զազդս և զազինս բաժանման լեզուաց,
Լեզուաւզ հրեղինաւզ նոր աւրնութիւնը ընդ տիեզերս հընչեն...

(Գրիգոր Նարեկացի, Տաղեր և դանձեր, աշխատասիրությամբ՝ Ա. Թյոշկերյանի, Երևան, 1981, էջ 278—279):

դեպերմամբ...»⁴²; Մ. Արեղյանը ևս այդպես է ընկալել նույն տողերի իմաստը. «Քերթողն ընդունում է Սարյակի պատասխանը... բայց ավելացնում է, թե... այդ տեսակետին հասել է նա բնությունը դիտելով և զիշեր-ցերեկ ուսման ու գիտության հետեւելով»⁴³: Հարցին այդպես է ճոտեցել նաև Ա. Արքահամյանը⁴⁴:

Որ, իսկապես, այդտեղ խոսքը Սարյակի ուսման մասին է, ու երեսմ է ինչպես նախորդ տողերից («Զայս առաց... թոշունն քաղցրախօս»), այնպես էլ նրանց անմիջապես հաջորդող հետեւյալ հատվածից:

Զայս առաց և հաստատեաց ուալէս կրնիք իւրոցն իւրաց,
Յանդիմանեաց ըզմեզ ուղիղ և ինքն օդովըն սլացաւ,
Ի բարձրութիւն ոստոյն նրստաւ՝ բգիայրենին բարբառելով:

Ամեն ինչ այնքան հստակ է, ու որոշակի, որ կարելի կլիներ զարմանալ՝ ինչպես են փորձառու մասնագետները սխալվել, եթե միայն շիմանայինք, որ նրանք հավատացած են եղել Սարյակի ամրողապես ընտկան թոշուն լինելու հարցում: Հիրավի՛, մի՛թե սովորական սարյակն այդպիսի փիլիսոփայական ընդհանրացում կաներ՝ մանավանդ աշխատանքի վերաբերյալ: Ամեն արգելք վերանում է, երբ նկատի ենք առնում Սարյակի կերպարանափոխությունը և գերբնական էակի վերաճելը՝ պոեմում: Պարզվում է, որ այդ փիլիսոփայական մտքի համար ևս սկզբնաղբյուր է հանդիսացել Աղեքսանդրը. նրա կարծիքով կենդանիների շնորհըր «յօդացեալ է ի ձեռն նոցա ինքնալուր և ինքնուսումն վարեցեալ բնութեամբ» (էջ 127—128): Նա միաժամանակ գտնում է, որ «ոչ միայն ինքնալուր և ինքնուսումն հանձարոյ ոմանք ի նոցանէ հասին, այլ բազումք և ուսեալք... զոր նոցա վարդապետք պատուիրեն» (էջ 134): Ինչպես տեսնում ենք, Աղեքսանդրի և Հովհաննես Սարկավագի տողերում կան անգամ բառերի ու դարձվածքների համանմանություններ: Օրինակ, պոեմում Սարյակը համարված է «ինքնարու և ինքնուսումն», իսկ Աղեքսանդրի մոտ՝ «ինքնալուր և ինքնուսումն», երկուսի մոտ էլ այդ շնորհըները կապված են հանձար և իմաստությունների հետ և այլն:

Կենդանիների ուսման մասին իսոսում են նաև ուրիշ հեղինակներ՝ հետեւյով Աղեքսանդրին, օրինակ, Գրիգոր Աստվածարանը գրում է. «կամիս՝ քեզ և զայլոց կենդանեաց զանազանութիւնք առ մեզ և առ միմեանս... Զիա՞րդ ու մանք... իբրև մերձաւորագոյն իմն ի բան և յուսումն, և այլք ամեննեին անրանք և անուսումնագոյնք... կէսք նախահոգակը, այլք՝ ամեննեին անգործք և առանց յառաջագոյն հոգալոյ...»⁴⁵: Բացառիկ կարևորություն ունեն Աղեքսանդրի հետեւյալ մտածումները. «Այսպիսով յամենայն ոգւոչ զիշխանական միտսն հաստատեաց... այլ է յումեք որ իբր նուաղագոյն է նկարագրութեան ընդազօտ, և դիրացինչ ձև կերպարանի. և է յումեք՝ յորում՝ որ իբր անջինչ յայտնագոյն է և դժուարալուաց կերպարան նկարեալ է: Արդ անյայտ տեսակն յայլսն է. իսկ հաստատուն և յայտնի տիպք ի մարդկան կերպարանս կրի»⁴⁶:

⁴² «Բազմավելք», 1847, էջ 216. ահս նաև «Յուշիկը հայրենեաց...» Բ, էջ 254:

⁴³ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 78:

⁴⁴ Ա. Արքահամյան, նշվ. աշխ., էջ 23:

⁴⁵ Զեռ Ա 61, թերթ 103ր:

⁴⁶ Ուշագրավ է նաև Աղեքսանդրի հետեւյալ պատկերացումը՝ բանականության տեսակների մասին: «Քանզի բանի կրկին տեսակ է,—գրում է նա, — մին ի ներքս ի խորհուրդն եղեալ է՝ իբրև զայլիք, վայր ունելով զուգոցն զառաջնորդականն և զիշխանականն: Իսկ գոշօղն նման

բայց, — շարունակում է նա, — ի վերաչ ասացելոցով՝ ոչ վայրապար և զայն ասելի է, եթէ իմաստութիւն և գիտութիւն և քաջախորհրդութիւն, և այն ևս, որ յառաջատեսակն է՝ հանդերձ նախախնամութեամբ, և որ ինչ միանգամ այլ ևս խորհրդոյ իմաստութեան եղրայր է, բազումք և այլք ի կենդանեաց՝ զայսոսիկ զորս բանական ասեն ոգույ առաքինութիւնք են՝ ունին» (էջ 138—139):

Իր ճառի վիրջում Աղեքսանդրն ասում է. «Արդ այլ ևս մասին հասին, ոչ միայն մարդ, այլ և այլ կենդանիք մտաց խորհրդականութեան ժառանգութիւն ընկալան՝ ոչ անյայտ է, այլ ի կցորդութիւն առաքինութեան և շարութեան ի նոցանէ մատուցեալ լինի հաւատ» (էջ 161):

Այս մտքերի՝ իրենց ժամանակի համար ունեցած առաջավոր նշանակությունը ցույց տալու նպատակով, հարկ է հիշել Ֆ. Էնգելսի հետեւյալ տողերը. «Եսակայն, ըստինքյան հասկանալի է, որ մենք մտադիր շնչք ժխտելու պլանաշափ, նախամտածված գործողություններ կատարելու ընդունակությունը կենդանիների մոտ: Ընդհակառակը, գործողությունների պլանաշափ եղանակն արգեն սաղմային վիճակի մեջ գոյություն ունի ամենուրեք, որտեղ պրոտոպլազմա կա, որտեղ կենդանի սպիտակուց գոյություն ունի և հակաղուում է, այսինքն թեկուզ ամենապարզ շարժումներ է կատարում, որպես հետեւվանք զրսից եկած որոշ զրգիւների... Կենդանիների մոտ գիտակցական, պլանաշափ գործողություններ կատարելու ընդունակությունը զարգանում է ներվային սիստեմի զարգացմանը համապատասխան և արդեն կաթնասունների մոտ բավականաշափ բարձր աստիճանի է հասնում... Մեր ընտանի կենդանիների մոտ, որոնք ավելի շատ են զարգացած մարդկանց հետ շփվելու շնորհիվ, կարելի է ամեն օր խորամանկության ակտեր դիտել, որոնք երեխանների նույնպիսի ակտերի հետ հավասար մակարդակի վրա են կանգնած»⁴⁷:

Ահա այսպիսի պատկերացումների վրա հենվելով է, որ Հովհաննես Սարկավագը կերտել է Սարյակի փիլիսոփայական կերպարը՝ սեփական գիտողություններից ու գիտելիքներից հանված եղրակացությունների օգնությամբ: Ըստ որում, նա իրեն բանաստեղծ այդ կերպարին օժտել է զերբնական հատկանիշներով և հեռացել նախորդներից: Ուստի, ինքնուսումնությամբ կամ վարժողությամբ կենդանիների ձեռք բերված արվեստի փոխարեն, նա դրվատել է անդուլ աշխատանքով ստեղծված արվեստը: Դա արդեն աշխատանքի դերի գնահատման փակուն օրինակ է, որպիսին շի հանդիպում մեր մատենագրության մեջ: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում հիշել Ֆ. Էնգելսի այն միտքը, թե «Աշխատանքն ամեն մի հարստության աղբյուրն է, պնդում են քաղաքատները: Նա խկապես այլպիսին է հանդիսանում բնության հետ միասին, որը նրան նյութ է մատակարարում, իսկ այդ նյութը նա հարստության է փոխարկում»⁴⁸:

Ինչ խոսք, Հովհաննես Սարկավագի պատկերացումներն այդպիսի ստուգության շեմն կարող հասած լինել, սակայն, առկա վիճակով խիստ ուշադրավ

է հոսման, ի ձեռն ըերանոյ և լեզուի ի բնական գործարարութեան լսելեօք լինքն ողեղեալ...

Արդ անանանելի՝ տեսակացն զար ընկալու միաբ. իսկ որ ի զգալութիւն հասանէ՝ փորձեալ լսելեօք... Բազումք են՝ որ յօդացեալ է ի ձեռն նոցա՝ ինքնուալուր և ինքնուամն վարեցեալ ընութեամբ. և բազումք են՝ որք և ուսուցեալ լինին, որպէս զագուաւող ասեն, և որ ի Հնդիկս պապկային են» (էջ 127—128):

47 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Բնակիր երկեր, հ. 2, Արևան, 1950, էջ 102—103:

48 Նույն տեղում, էջ 91:

են: Նրա մոտ էլ աշխատանքի գաղափարը կապված է բնության հետ: Բացի դրանից, բանաստեղծը ուշադրություն է դարձրել արվեստի ծագման մի ուրիշ գործունիք՝ «գործի» հասկացության վրա, առանց որի կատարյալ արվեստի հասնելը նաև անհնար է համարում: Բառարանական բացատրություններից գործիք գաղափարին ավելի մոտ է միջոցը (հնարավորության իմաստով), բայց տվյալ դեպքում ավելի ճիշտ կլիներ շնորհիք, օժտվածությունը: Խոսքն այն տողերի մասին է, ուր առասպելական մարդ-երգիչներն իրենց երգելու արվեստով շեն հավասարվում Սոխակին, ասպուճակին, ճպուին՝ համապատասխան գործի շունենալու պատճառով:

Զի գործի այսր արուեստի նորա շունին ի բնութենէ...

Այսինքն՝ շնորհների պարզեցվ բնության կողմից ավելի շատ օժտված են կենդանիները, քան մարդիկ, ուստի մարդը բնությունից է սովորել: Այս տեսակետից ուշագրավ է պոեմի հետեւյալ հատվածը, ուր խոսքն ուղղված է Սարյակին:

Հոմերական տաղիցը շափ քե ծանուցեալ լինի բազմաց,
Անտանաւոր և ցուցական՝ ըստ Ենրողացըն տեսակի,
Կամ թե ևս աւելագոյն՝ որպէս թուի ինձ՝ գիտողիս,
Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բրնութիւն:

Վերջին տողով հնդինակը հասկացնում է, որ բնությունը շի կարող սովորել ուրիշից, և քանի որ Սարյակը աիրապետում է կատարյալ արվեստի, ապա դա՝ նրա սեփականն է, նրա օժտվածության արդյունքը: Հետեւապես մարդը պիտի սովորի նրանից՝ բնությունից:

Ինչպես Մ. Արեգյանն է նկատել, «Բան իմաստության» պոեմում արվեստի մի քանի ճյուղեր (խոսք, երգ, նվագ և այլն) միասին են ներկայացվում. օրինակ.

Ո՞վ պարող դու անձանձիր և կարափիշ յոգնանուագ...

Աստ գաս նըստիս մերձ առ ինձ՝ իրը արուեստի ինձ յանգակից,
Բազմադեաւ երգարանաւ եղանակես և կարաւես...⁴⁹:

Հիշենք նաև Հոմերական տաղաշափությանը, «ոտանտոր և ցուցական» քերթություններին, «ևս աւելագոյն» արվեստների տիրապետելը, որ հիշված են վկայակոչված նախորդ տողերում: Բոլոր այս շնորհներով Սարյակը ներկայացնում է արվեստների մի ընդհանուր բնագավառ, և այն՝ իրեն մեկը մյուսի հետ կապված հարազատ ճյուղերի ամբողջություն: Խոսքից անբաժան է տաղաշափությունը, քերթությունն իր տեսակներով, ապա երաժշտությունը, նրանից՝ երգարան գործիքը, իսկ բոլորից՝ պարն ու կաքավը: Այստեղ նկատելի է, արվեստի հարակից ճյուղերի կոմպլեքսային ծագման ու համատեղ զարգացման տեսության գաղափարը, որն ինքնին արժանի է մեծ ուշադրության: Չենք կարող շհիշել Մ. Արեգյանի այն միտքը, թե արվեստի հետ կապված բոլոր այն խնդիրները, որոնք առկա են պոեմում բանաստեղծն ինքն է լուծել: Ճիշտ չէ, դրանք, հիմնականում, հին աշխարհի մտքի նվաճումներն են՝ վերածնված հայ միջնադարում: Այս առումով խնդրին ճիշտ է մոտեցել Հ. Ապրեսյանը, երբ

49 Աստվածաշնչում երգի ու քնարի ստեղծողը երևակայական Հովրաղն է. «Յովրաղ, նա է հայր՝ որ եցուց զերգս և զքնարա» (Ծնունդը, Դ, 21):

արվեստի ընդօրինակության հարցի կապակցությամբ գրել է. «Եատ ավելի վաղ քան Հովհաննես իմաստասերը հին հունական մտածողները, սկսած առնվազն Դեմոկրիտից, ալնդել են, որ արվեստը բնության նմանողության արդյունք է: Այս համոզմունքն իր ամենալիարժեք դրսերումը ճիշտ ձևակերպումով ստացել է Սրբատոտելի «Թուետիկայում»⁵⁰:

Մասնագետները Հովհաննես Սարկավագին են վերագրել այն միտքը, թե բնությունը ենթակա չէ ուսման և դրա համար վկայակոչել են հատկապես հետևյալ տողը:

Զի վարժումն և կրթութիւն ո՞չ ժամանէ առ ընութիւն...

Հիրավի, դա փիլիսոփայական մեծ ընդհանրացում է՝ խիստ դիպուել ձևակերպմամբ, որն իր այս ուղղակի առումով մեզ հայտնի չէ սկզբնազբյուրներից, շնայած այնտեղ այդպես մտածելու առիթներ տվող փաստեր կան: Օրինակ՝ Ազեքսանդրը բանական համարելով կենդանիներին, նրանց մի մասին դիտում է իրքեւ սովորելու ընդունակներ, իսկ մի մասին՝ ո՞չ: Այդ միտքը կրկնում են նաև հաջորդ դարերի հեղինակներից շատերը: Փիլոնը, սակայն, մերժում է կենդանիների սովորել կարողանալու ընդունակություններն առհասարակ, պնդելով, թե նրանք, զուրկ լինելով բանականությունից, զրկված են նախահոգությամբ (կանխամտածվածությամբ, նախապես հոգալ կարողանալով) սովորելու հնարավորությունից և ստեղծագործելու հանճարից: «Քանզի եթէ նախախնամութիւն ի բաց բարձեալ է, դադարեսցէ երաժշտականութիւնն, իմաստասիրութիւնն, երկրաշափութիւնն, նաւաստականութիւնն, և ամենայն առաքինի մարթանք հանճարոյ» (Էջ 15): Փիլոնը միաժամանակ հրճվում է ընության գեղեցկություններով, թոշունների դայլալանքով, այդ բոլորը համարելով ոչ թե բանականության, այլ բնազդի հետևանք: «Քանզի անուսումն ամենայն ոգի եղիցի, — զրում է նա, — յորժամ նախախնամութիւն ոչ գոյ: Քանզի և ոչ զմրզին նախահոգական ոք կալցի, և ոչ զմեղու արարշական, և ոչ զժիժառն իմաստուն, քսնզի ոչ նախիմացությամբ, ի բնութենէն զայս գիտէ» (Էջ 24): Այստեղ արդեն կարելի է տեսնել բավարար հիմք՝ այնպիսի կուռ ընդհանրացման համար, որ առկա է պոեմի վերոհիշյալ տողում⁵¹:

Քանի որ այդպիսիք են եղել բանաստեղծի համար առկա պատրաստի և ելակետային մտքերը, բնականաբար, նա իր հերոսին՝ Սարյակին միակը չի համարում արվեստի բնագավառում, այլ շատերից մեկը: Այս տեսակետից ուշագրավ է պոեմի հետևյալ հատվածը.

Թէ ազգակից ես սոխակի, ասպունակի կամ՝ նպան⁵²...

Երաժիշտը են և նորա, բայց ցանկացան անապատի,
Դաշնակացը նուազօք ըզբացավայրուն դարդարեն...

50 Ռ. Առքեան. Ին իստորիա արմանական գործականության պատմությունների մասին. Երևան, 1973, ստ. 139.

51 Հովհաննես Սարկավագը նոյն մտքերին հետևյալ մեկնարանությունն է տվել. «Զգիտությունն և գիմաստն որ կարգաւորաբար ի բանականք է, ասէ, և ոչ ի շեշտառ անաստեղծությունն ամենայն իրօք գիտութիւն ի բաց բարձեալ է, ի նոցանէ. միայն բանականքն է ոմակական գիտութիւն և արտեստ իմաստութեանն, զոր շունէր յառաջ և ուսմամբ եզիտու: «Չէ պատեհ ասել, թէ ընթարութեամբ և յառաջախութեամբ առնին (իմա՝ կենդանիները — Ա. Մ.) գտործն, այլ ընութիւնն բաշխինաց է ետ զայն ընտանի յար իրաքանչիւրոց» (Չեռ. № 2595, թերթ 250ա—251ա):

52 Ընդգծված բառերը Պ. Ալիշանի ունեցած օրինակում վնասված են եղել և հրատարակվի կողմից լրացվել են շատ զայն դիմադրութեամբ կիսատողական ու այլ զնամանական կառավագանում:

Ամփիոն այս թերացի և Արիոն Միթեմնացի,
Որիևս Թրակացի, այս երաժիշտք են մեծագովք.
Այլ նուազեալ են առ նորօք, որք բնականաւն են պաճուճեալք,
Զի դործի այսոր արուեստի նորա շունին ի բնութենէ:
Մի և զու ես յանցանէ, զորոց լոււար զպամութիւնն,
Համարուեստ և անուանի որպէս արդյունքն վրկայեն...

Ահա թե ինչպիսի առավելություններ ունեն բնության ներկայացուցիչները: Աղեքսանդրի մոտ կենդանիների՝ մարդու նկատմամբ ունեցած առավելությունների կապակցությամբ հիշված փաստերից մեկն էլ սարդի օրինակն է. «Զսարդ ո՞չ տեսանես որշա՞փ և որպիսի՞» և ի՞ր սքանչելի իմն կազմէ: Քանզի ո ոք տաժանագործ նիւթող և կամ ոստայնանկ բաւական է՝ ոչ հակառակելով ասեմ, բայց նմանեցուցանելով, կարել տանել արուեստի զերկրորդութիւնն... Քանզի առեալ իբր ասր անգործ նիւթ՝ հանճարաբար իմաստութեամբ յոյժ արուեստու կազմէ» (էջ 130):

Ահա և նմանողության հարցը: Կարեորն այն է, սակայն որ, բայց հեղինակի, բազմաթիվ տաժանակիր մարդ ոխտի պահանջվիր՝ ոչ թե նման գործ ուրույնաբար անելու, այլ ընդօրինակելու համար: Սյուեղ ուշագրավ է՝ մի այլ փառտ ես, որը ցույց է տալիս, թե բանսատեղծն օգտվել է ոչ թե լոկ Աղեքսանդրից, այլև նրան բաշտանոթ ուրիշ հեղինակներից: Այս առումով պերճախոս է հետեւյալ տաղը.

Թէ աղջակից ես սոխակի, ասպուճակի կամ՝ ճպոան...

Ասպուճակի մասին խոսք չկա ոչ միայն Փիլոնի ու Աղեքսանդրի մոտ, այլև հայ մատենագրության մեջ, բացի Հովհաննես Ռոկերերանի Պողոսի թղթերի հայ մեկնությունից⁵³: Սյուեղ կարդում ենք. «Այլ թերեւ ձայնի՞ւ ինչ հպարտանայցես. բան զփորն և զսոխակ և զասպուճակ շկարիցիս երբէք ձայն ինչ քաղցր և հեշտական մրմնչել»⁵⁴:

Ճպուռի օրինակի համար կարող ենք հիմք համարել Գրիգոր Աստվածարանի և Բարսեղ Կեսարացու մտքերը: Առաջինն առում է. «Ո՞ ետ ճպրան ի լանջս զմանեկաձնութիւն և ի վերայ ոստոցն զերգան և զդալլալիկն՝ յորժամ արեգական շարժումն զմիջորեայն առնիցէ, երդէ և հնչեցուցանէ ձայնի զանտառսն, և զուզեզնացն ձայնիւք անցուցանեն»⁵⁵: Բարսեղ Կեսարացին ես մոտավորապես նույնն է կրկնում. «Զարմանալ պարտիմք զարձեալ և ընդ քաղցրանուագ բարբառ՝ զոր զեղգեզեալ յօրինէ ձեսպիոն (տարընթ. ճպուռն). զիա՞րդ մէջօրեայ ժամանակի զխածեակն զոր ունի ի լանջսն՝ ձգեալ պրկէ... և այնպիս անդադար զեղգեզէ զրաբրառն քաղցր և հեշտ նուազովք, առաւել քան զերգս արուեստականաց»⁵⁶: Ահա թե ինչպիս են հնում բարձր զասել կենդա-

53 Հ. Անայան, Հայերեն արմատական բառարան, Ա, Երևան, 1971, էջ 276. «ուրիշ տեղ չ օգտագործված»: առեալ նաև «Նոր բառզիրը Հայկադեմն լեզուի», Ա, Երևան, 1979, էջ 516:

54 «Հովհաննես Ռոկերերանի Մեկնութիւն թղթոցն Պողոսի», Ա, Վենետիկ, 1862, էջ 430:

55 Զեռ. Ա 69, թերբ 105 բ:

56 «Երբայն Բարսեղի... ձառք», էջ 174: Զնայած ճպուռի մասին խոսում է նաև Փիլոնը, բայց նրա մոտ այդպիսի մխաք չկա: Նա գրում է: «իբր առևն զնայանցդ ազգը օգով կերակրիլ» («Փիլ. Տեսական»): Սյու միտքն օգտագործված է Սղյշեի կողմից. «Անարին ճպրանց նմունեցին, որ երգոյն քաղցրութեամբ տունց կերակրանաց ազրին» (Բ): «Բնան իմաստութբան» պումում ես այդպիս է մտածված. «Նուազօքըն կերակրեալք»:

նիների շնորհները, այդ թվում նաև ճպուռ միջազի, որին թուռն են համարել ու զետեղել սոխակի, ասպուճակի ու նրանց ցեղակիցների շարքը:

Հովհաննես Մարկարագի «Բան իմաստության» պոեմի հերոսը լուրսի հիշեցնում է քրիստոնեական եռաստվածության Սուրբ Հոգուն և կարծես միառում է փոխարինել նրան: Այստեղից ինքնին առաջանում է այն կասկածը, թե արդյո՞ք Հովհաննես Մարկարագը Մարյակի միջոցով չի՞ տվել Սուրբ Հոգու գաղափարն արտահայտող նոր ոգու պատկեր: Այս հարցը կարող է ծագել և առիթ դառնալ թյուրիմացությունների, եթե այստեղ դրան շտրվի որոշակի պատասխան: Բանն այն է, որ Սուրբ Հոգին ևս համախ նկարագրվում է նույն սիսի հատկանիշներով՝ ինչպիսիններով Մարյակը: Օրինակ, Գրիգոր Նարեկացին «Գալստեան Հոգուն» տաղում այսպիս է ներկայացնում նրան:

Յանկարծահնշեաց հայրաշարժ բղխումն
Հրահոսսավտակ բոցաշաւեղ եռանդն.
Որոյ դրանդն ի յերկնից հոգմահնշեաց
Բոց ի բոցատիակ խուռնամանուած լեզուաց:
Ի ձայն բիւրակերայ օդինատիակ լրումն
Աւետաքարոզ տրտմականաց դասուց
Պետրոսեան երամ հրաւիրողակ բարեաց:
Հրով մաքրողին վերառաքեմք
Եննարար երգ ի նա մէտ.
Եւթնաղի շնորհաց Հոգուն Սրբոյ.
Հոգի Հօր, ելումըն նոյնատիակ դիմաց:
Հոգի Աստուծոյ, Հոգի զօրութեան,
Հոգի հեղութեան, Հոգի գիտութեան, իմաստութեան,
Հոգի խորհրդոյ և հանձարոյ...⁵⁷:

Այստեղ հեղինակը նկատի ունի այն տեսարանը, ուր Սուրբ Հոգին հրեցեն լեզուներ է նվիրում առաքյալներին և նրանց հետ ներկա գոնվողներին: Բանաստեղծն էլ նրան համարում է «Եթնաղի շնորհաց», «գիտութեան» «իմաստութեան», «հանձարի» ստեղծող ու հովանավոր: Բայց, ինչպես տեսանք, Հովհաննես Մարկարագը, Մարյակին համեմատելով առաքյալների հետ, նշում է, թե նա այստեղ չի եղել և հրեցեն լեզվով չի պարգևատրվել: Հետեւ սկսած հեղինակը որոշակի դիտակցությամբ է տարբերել իր հերոսին թե առաքյալներից և թե Սուրբ Հոգուց: Բացի դրանից, Մարյակին ու Սուրբ Հոգին միանգամայն տարբեր են նաև իրենց բոլոր առանձնահատկություններով: Եթե Սուրբ Հոգին աղավնակերպ է⁵⁸, պոեմի հերոսը՝ սարյակակերպ է, եթե Սուրբ Հոգին անմահ է, ապա երկրորդը՝ մարդկանց նման ե՛ մեռնող է, և հարություն առնող, եթե առաջինն ի սկզբանե աննյութական է, առաջ երկրորդը նյութական է՝ վերաճած զերբնականի, եթե առաջինը եռաստվածության բաղկացուցիչներից մեկն է, ապա երկրորդը կապ չունի նրանց միասնության հետ, եթե առաջինը արվեստների բաշխողն է, ապա երկրորդը՝ ստեղծողը՝ այն էլ՝ աշխատանքով,

57 Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 479—480:

58 Մատթեոսի Ավետարանում առված է, «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, եւ վաղվաղակի ի զրոյ անտի, և աշա բացան նմա երկինք, և ետես զշոգին Աստուծոյ՝ զի իշանէր իբրև զաղանի և զայր ի վերայ նորաւ: Եւ աշա ձայն յերկնից որ ատէր, զու է մրցի իմ սիրելի՝ ընդ որ համեցայ» (Գ, 16, Հմմտ. Մարկոս, Ա, 10, Ղուկաս, Գ, 22, Հովհաննես Ա, 32):

եթև առաջինը հոգեսոյ հասկացությունների մարմնացումն է, առաջ Սարյակը նյութական՝ բնության-տիեզերքի և այլն:

Պարզ է, որ Հովհաննես Սարկավագն ստեղծել է բնության ուժերի մարմնապորման և Հովհանավորի մի նոր կերպար՝ հեթանոսական խառնվածքով:

Քննված փաստերը թույլ են տալիս պնդելու, որ, իրո՛ք, Հովհաննես Սարկավագն իր պոեմը գրել է հին սկզբնաղբյուրների և հատկապես Աղեքսանդրի ու Փիլոնի «Յաղագս բան ունել...» երկի գաղափարների օգտագործմամբ, ինչպես և սեփական իմացությունների շնորհիվ զրանց զարգացմամբ: Ըստ որում, Սարյակի կերպարը ոչ թե բնական թոշունի գեղարվեստական վերաբարությունն է, այլ՝ բնականի հիման վրա ստեղծված գերբնական էակի: Այս՝ իր ամրողցությամբ (պոեմի առաջադրած հարցերի առաջին խմբի առումով) փաստորեն ստեղծագործական մի նոր ու ինքնատիպ կերպար է հայ միջնադարյան դրականության մեջ, որի քրիստոնեական ձեփ տակ վերակենդանացել է ներանոսական ոգի: Քրիստոնեական ձեւ ասելով նկատի ունենք Սարյակի քարոզած գաղափարախոսությունը՝ հատկապես մեղքի և մեղանշականության աստվածաշնչային դրույթներն ու առասպելները պաշտպանելու և տարածելու նպատակով: Դրանք աստվածաբան բանաստեղծի պատկերացումներն ու հաւատքի առտահայտություններն են: Հեթանոսական ոգի ասելով նկատի ունենք Սարյակի՝ առվեստի բնագավառի ստեղծող, սովորեցնող լինելը՝ իրեւ բնության ներկայացուցիչ: Դրանք արդեն գիտնական-բանաստեղծի պատկերացումներն ու համոզմունքներն են: Այս միասնության մեջ է հեղինակի մեծությունը և պոեմի իսկական արժեքը:

Պետք է ասել, սակայն, որ այս կապակցությամբ հրապարակի վրա են նաև ոչ ճիշտ կարծիքներ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ հաջորդ էջերում:

Դ. Աշխարհագործության պոեմում զարգացված
առաջին խմբի հարցերի մասին

Պոեմի հիմքում ընկած սկզբնաղբյուրների բացահայտված ըլինելը առիթ է հանդիսացել մի շարք սխալ կարծիքների, որոնք ուժի մեջ են նաև այսօր: Արդեն նկատեցինք, թե ինչպես նախ Մ. Արեգյանը, ապա նաև ուրիշ մասնագետներ այնպես են կարծել. թե պոեմում առկա բոլոր նոր ու առաջավոր մքերը հղացել ու լուծել է Հովհաննես Սարկավագը, մինչդեռ զրանք առնված են Աղեքսանդրի, Փիլոնի և այլ հին հեղինակների աշխատություններից և զարգացված հեղինակի դիտողությունների օգնությամբ: Առհասարակ այն տպավորությունն է ստեղծվել, որ «Բան իմաստության» պոեմի հեղինակը բնությունն ընկալել է այնպես, ինչպես կընկալեր ժամանակակից առաջավոր մտքերից ելնող որևէ համատացյալ: Դա ևս ճիշտ չէ, որովհետեւ նման պատկերացումների սկիզբը Ֆ. Էնգելսը դիտում է՝ XVI—XIX դարերում զարդացած բնագիտության ոլորտներում: Խոսելով XVIII դարի կապակցությամբ նա գրում է. «Ինչքան ԽVIII դարի առաջին կեսի բնագիտությունն իր իմացությունների ծավալը լով և նույնիսկ այսուհի ախտեմատիդացիայով ավելի բարձր էր հունական հնագարից, նույնքան էլ այն զիջում էր նրան այդ նյութին իդեալիստելու իմաստով, բնության նկատմամբ ընդհանուր հայացքի իմաստով: Հունական գիլիստիաների համար աշխարհն ըստ էության բառուից ծաղած, զարգացում

ապրած, գոյացած ինչ որ մի բան էր։ Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանի բնախույզների համար աշխարհը մի ինչ որ քարացած, անփոփոխ, իսկ մեծամասնության համար միանգամից սունդօված բան էր։ Գիտությունը դեռ խորն ընկղմված էր թեոլոգիայի մեջ⁵⁹։ Հետեւապես, միանգամայն անհնարին կլիներ կարծել, թե Հովհաննես Սարկավագը «ամենայն մանրամասնությամբ»⁶⁰, «ինչպես մի բնագետ»⁶¹ ուսումնասիրել է «իրական թոշունին»⁶² և հանգել այն բոլոր առաջավոր մտքերին, որոնք առկա են «Բան իմաստության» պոեմում։ Սա՝ ընդհանրապես։

Մ. Արեգյանի մոտ տեղ են գտել նույն առանձին ոչ ճիշտ մեկնարանություններ։

Այսուեղ առաջին հերթին կկամննայինք անդրադաւնալ նրա պաշտոպանած այն կարծիքին, թե Հովհաննես Սարկավագը «արվեստի ծագման մասին մի նոր տեսություն է առաջ բերել։ Մինչդեռ ըստ հին կրոնական հայացքի՝ արվեստի աղբյուրը «հայտնությունն» է, նա բանաստեղծությունը համարում է ընության նմանողություն և ներբողում է ընությունը»։ Այսուհետեւ, նա կատարելով որոշ քննություններ, եզրակացնում է. «Այսպիսով ժխտվում է հայտնությունն իրրե մարդուս արվեստի աղբյուր և հնարավոր է լինում արվեստը համարել ընության նմանողությամբ սովորովի։ Ահա թե որպիսի դրույթներով է ստածել մեր Քերթողը...»⁶³։ Մ. Արեգյանը, սրելով հարցի հակազրության եղանակով լուծված աեսնելու այս միտքը, կատարում է նաև հատուկ վերապահություն, որպիսզի ընթերցողը չկարծի, թե «Սարկավագ Վարդապետը մերժում է ընդհանրապես հայտնությունը։ Այդ դեռ շատ վաղ էր նրա դարի համար, երբ իշխում էր մեծ բարեպաշտությունը։ Նա ընդունում է կրոնական հայտնություններն իրրե ձշմարիտ եղելություններ և իր քերթվածի մեջ հիշատակում էլ է տուաքալներին եղած հայտնությունը վերնատանը Հոգեգալստին։ Շորպէս և այլ տնահսականքն։ այսինքն՝ Քրիստոսի մարդկանության վերաբերյալ հայտնությունները, որոնք ասվում են նաև «տնօրինականք»։ Նա այդ հին տեսությունը չի ընդունում մասունակային արվեստի—երաժշտության ու բանաստեղծության նկատմամբ»⁶⁴։ Իր այս կարծիքը հաստատելու նպատակով Մ. Արեգյանը «Բան իմաստության» պոեմից վկայակոչել է հետեւյալ տողը։

Արդ կացի ի բնականին, որոյ պարզեն է յայտնութիւն...

Ապա նա անմիջապես եզրակացրել է. «Այդ կնշանակի ընականի մեջ մնալու հետեւանքով է արվել նրան (իմա՝ Սարյակին—Ա. Մ.) երգելու շնորհքը։ Կամ նրա արվեստի ներշնչումն «բնականի պարզ է», արդի բառով ասած ընատուր է»⁶⁵։

Պետք է ասել, սակայն, որ պոեմում ոչ մի խոսք չկա հայտնության շնորհիլ ստեղծագործելու, մուսայի և նման այլ պատկերացումների, մանավանդ նրանց քննադատության ու ժխտման մասին։ Դա առաջացել է Սարյակի կերպարի այլարանական կողմը չնկատելու, շուտումնասիրելու, ուստի և ընություն

59 Կ. Մատես, Յ. Էկելիս, Աշլ. աշխ., էջ 71—72։

60 Մ. Արեգյան, Երկեր, Դ, էջ 76։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, էջ 75։

63 Նույն տեղում, էջ 77։

64 Նույն տեղում, էջ 74։

65 Մ. Արեգյան, Երկեր, Ա, էջ 74. ընդգծումը մերն է։

բառը տարբեր իմաստներով լընկալելու պատճառներով։ Այժմ կարող ենք պնդել, որ Մ. Արեգյանի հիմք դարձած բնուրյունը իսկական բնության հետ կապ չունի, այլ՝ կրոնական հասկացություն է, իսկ հայտնուրյունն էլ վերաբերում է ոչ թե ստեղծագործական շնորհը պարզելու մասին եղած հին պատկերացումներին, այլ Քրիստոսի մարդեղությանը։ Ուստի վերջինիս նպատակն էր, ըստ բանաստեղծի, ոչ թե Սարյակին երգելու շնորհը ընծայելը, ինչպես բացատրում է Մ. Արեգյանը, այլ՝ մարդկությանը հավերժական մահից փրկելը և նրան օգնելն առհասարակ։

Մ. Արեգյանի վրիպած լինելը ցույց տալու նպատակով նախ հիշենք բնուրյուն բառի օգտագործման հետեւյալ առումները, ուր նրանք ունեն զուտ կրոնական բովանդակություն։ «Որով և բնական իսկ էք նորա (Աստուծոյ) բնուանութեամբ, ըստ քրիստոսական հաւատոցն»⁶⁶։ «Չի նորիմբը աստուածեղին բնութեանն լինիցիմք հաղորդակիցը»⁶⁷։ «...երեք անձինք և մի բնութիւն մի աստուածութիւն»։ «Նոյն է Աստուած և մարդ ասել և երկու բնութիւն Քրիստոսի»։ «Նա ըստ բնութեան որդի է Աստուծոյ, իսկ մեք ըստ շնորհի. մեք ըստ բնութեան եմք որդիք Ադամայ»։ «...աստուածեղին բնութեանն լինիցիմք հաղորդակիցը»։ «Աստուծոյ բնութեամբ է տէրն անուն»։ «Ոչ ասեմք զմի բնութիւն զյատկութիւն էութեանցն շփոթելով» և այլն⁶⁸։

Ինքնին հասկանալի է, որ Հովհաննես Սարկավագն էլ կարող էր իր պոեմում բնուրյուն բառն օգտագործել և՛ իսկական իմաստով, և՛ կրոնական։ Այն բոլոր դեպքերում, երբ նրա ելակետն Աղեքսանդրն է՝ նա նկատի է ունեցել իսկական բնությունը, իսկ այն բոլոր դեպքերում, երբ նա խոսում է կրոնական-աստվածաշնչային պատկերացումների մասին, նրա նշած բնությունը լոկ կրոնական իմաստ ունի։ Համոզվելու համար, մասսամբ կրկնելով, հիշենք պոեմի այն հատվածը, որից առնված է Մ. Արեգյանի վկայակոչած տողը։

Զաւանդըն պահեցի և տուգանաց ո՞չ բղպացի.

Զշինեցի՛ ես աշտարակ, զի յոդնակի դարձեալ մեղայց,

Կամ ընկալայց բղպատուհաս՝ նըմանապէս բանաւորացդ.

Միոյ շրթան և բարբառոյ բազմատեսակ բաժանելոյ.

Ըղար կամացըն միութիւն այնու ի բաց անջատելոյ.

Չի և բազմացն է միութիւն նըմանապէս պարսաւելի,

Փոխադարձիշ յո՞շ բընաւոր ըստ մեղանացըն շահեցման։

Ա. Կացի ի բնականին, որոյ պարզեն է յայտնութիւն,

Որ ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքր հօտին.

Ծնձեռնեցաւ նոցա բազում, ոյի կոշեսցին բազումքն ի մին,

Զոր միովըն կորուսին՝ հակառակաւըն շահեցցին.

Որպէս և այլ անտեսականքն, որով կեցար ի մահուանէ,

Ըղմեղ նորոգեցին ընդդիմակօք սրխալանացն։

Բոշնիկն այստեղ, ինչպես վերենում էլ տեսանք, իր ձաւինային առավելությունները կապում է արարշագործության նախնական միջակի և աստծու պատգամները պահելու հետ։ «Զաւանդն պահեցի» և «Կացի ի բնականին պարձիմակօք լոկ այդ կրոնական պատկերացման իմաստն ունեն, և այդտեղ

⁶⁶ «Նոր բառդիրք Հայկագետն լեզուի» Ա, Երևան, 1979, էջ 495—499։

⁶⁷ Նույն տեղում։

⁶⁸ Նույն տեղում։

ընդարության գաղափարը բոլորովին շկա: Դա առավել անվիճելի է: Դառնում, երբ ծանոթանում ենք նրա իմաստը բացահայտող «Հայտնություն» բառի էլությանը: Մ. Արեգյանի վկայակոչած տողին անմիջապես հաջորդող տողում ասված է, թե նշված հայտնությունը որպես է «Փոքր հօտին», «ի լրաման ժամանակաց»: Արդ ի՞նչ են նշանակում այս դարձվածքները: Երկուսն էլ աստվածաշնչային-ավետարանական ըմբռնումներ են՝ կապված Քրիստոսի գաղափարի հետ: Այսպես, Ղուկասի Ավետարանում Քրիստոսը, համբարձվելուց առաջ, զիմելով՝ իր աշակերտներին և հետեւրդներին, ասում է, «Մի երկնշիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութին» (ԺԲ, 32): Դա այնքան կանոնիկ դարձվածք է, որ թարգմանությունների մեջ համապատասխան հատվածը դրվում է «Փոքրիկ հօտը» ենթախորագրի տակ⁶⁹:

Այդ թեմայով Գրիգոր Նարեկացին գրել է մի դոզտրիկ տաղ, որը նկարագրվում է նույն փոքրիկ հօտի տիսուր վիճակը:

Այն փոքրիկ հօտին տրտմեալ,
Վաւակս արտասուաց բղիւեալ...
—Որ ես հայր որբոց յուսով,
Ո՞ւմ յանձն արարեր զմեզ...⁷⁰

Թե, իրո՞ք, պոեմի ըննվող տողերում Հովհաննես Սարկավագի խոսքը վերաբերում է Քրիստոսի մարդեղությանը, դա երեսում է նաև այնտեղ առկա «ի լրաման ժամանակաց» արտահայտությունից, որը ևս աստվածաշնչային է և Հանդիպում է Պողոս առաքյալի «Թղթերում»—վերաբերելով մարդարեների դուշակություններին՝ Քրիստոսի աշխարհ գալու վերաբերյալ: «Այլ իբրև եկն յունն ժամանակին առաքեաց Աստուած զորդին իւր որ Եղե ի կնոջէ» (Առ Գաղատացիս, Դ, 4), կամ՝ «ի տնտեսութիւն լրման ժամանակաց բովանդակել զամենայն Քրիստոսի որ ինչ լերկինս և որ ինչ լերկրի ի նոյն» (Առ Եփեսացիս, Ա, 10):

Այսպես, ուրեմն, Մ. Արեգյանի վկայակոչած տողում «բրնականքն» բառը նկատի ունի արարշագործական անաղարտ վիճակը (և ոչ թե ընդարույց ընությունը), իսկ «Յայտնութիւն» բառը՝ Քրիստոսի մարդեղության և աշխարհ գալու առասպելը (և ոչ թե ստեղծագործական որևէ ոգու կամ մուսայի երեալը): Այդ հայտնությամբ աշխարհ Եկած Քրիստոսն էլ կոշված էր ոչ թե Սարյակին երգելու շնորհը պարզելու, այլ մարդկությանը սատար դառնալու: Առհասարակ էլ, պոեմում բանաստեղծը բոլորովին շի անդրադարձել ստեղծագործական առումով հայտնության այն տեսությանը, որ վերագրվում է նրան:

Մ. Արեգյանը Հովհաննես Սարկավագին է վերագրում նաև այսպիսի միտք: «Մարդս զարդանալով բարձրացել է մտավորապես, հեռացել է բնական վիճակից, ընկել է ուշ բնաւոր»—ոչ-բնական, անբնական վիճակի մեջ: Հենց այդ պատճառով նրա արվեստն, ըստ Սարկավագ Վարդապետի, բնածին շէ...»⁷¹:

Դժվար է համաձայնել այս կարծիքի հետ, որովհետև Հովհաննես Սարկավագը շի ասել, թե մարդու զարգացումն անբնական երևույթ է, իսկ նրա արքեստն էլ բնածին շէ: Ընդհակառակը, «Բան իմաստության» պոեմի համա-

69 «Եղբ կտակարան», էջմիածին, 1969, էջ 255:

70 Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Երևան, 1957, էջ 98:

71 Մ. Արեգյան, Երկեր, Դ, էջ 74:

ձայն, և կենդանիները, և մարդիկ բնական արարածներ են՝ օժտված ստեղծագործելու սնիւական կարողություններով։ Այլ բան է, երբ նա այդ պատկերացումները հիմնավորում է մեղանշականության դոգմաների օգնությամբ։ Բայտ այդմ է, որ թաշունը արարշագործության բնական վիճակին հաստատ մնալով, չի կորցրել աստծու տված շնորհները, իսկ մարդը կորցրել է մեղանշելու (և ոչ թե զարգանալու) պատճառով։ Հետեւապես նա պիտի հանապազորյա մեղսաքավությամբ ձգտի բարձրանալ դեպի նախակին վիճակը, քաջ իմանալով, որ երբեք չի հասնելու այդ վիճակին («ի բնականին»)։ Այս կապակցությամբ ուշագրավ է Ա. Մագոյանի և Հ. Միրզոյանի դիտողությունը, որի համաձայն Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը պատկանում է Հովհաննես Սարկավագին։ Նրանք իրավացիորեն իրրե փաստարկ վկայակուշել են մեկնիչի հետեւյալ միտքը. «Եւ ծանիր, որքան և զանայ մարդն յիմաստասիրութիւնն, չկարէ ելանել յայն, որ ունէր նախքան զմեղանշելն։ Վասնզի օտարացաք ի բնականէն»⁷²։ Այսուղ էլ բնական մեղսագործությունից առաջ եղած արարշական վիճակն է, որից մարդն օտարացել է մեղանշելու պատճառով։

Մ. Աբեղյանը «Բան իմաստության» պոեմի հիմնական գաղափարները համարելով սոսկ Հովհաննես Սարկավագի բնագիտական դիտումների արդյունք, սխալ պատկերացում է կազմել Գրիգոր Նարեկացու մասին։ Նրա համաձայն վերջինս «ընությունն զգում է ներհայեցական-ինտուիտիվ կերպով, նա բնությունից վայրկենական տպագորություն ստանալով՝ անմիջական ծանոթություն է ունենում նրա մասին և այդ ինչպես և իր գիտակցության մեջ ծնկած մի միտք կամ մի հուշիկ, — արտահայտում է բանաստեղծորեն ինքնարուին և արագ ժագած պատկերներով։ Այսպես չէ Սարկավագ Վարդապետի համար։ Սա էլ հարկավ, տպագործում է բնությունից, բայց նրան մատշում է երկար դիտելով այն, խորհելով և դատելով, ուսումնասիրելով և եղրակացություն հանելով նրա մասին։ Այսպես վարվում է նա իրրե իմաստասեր, և որովհետեւ նա միաժամանակ և բանաստեղծ է, «իր այսպիսի հոգեկան գործունեությունը ձևավորում է բանաստեղծորեն»⁷³։ Պետք է ասել, որ դա էլ այլպես չէ, որովհետեւ Հովհաննես Սարկավագի պոեմի մեջ առկա իմացությունները ոչ թե լոկ նրա դիտարկումների արդյունքն են եղել, այլև նախորդ սերունդների՝ ընդհուպ մինչև հեթանոսական հեռավոր ժամանակները։ Դրանք մատչելի են եղել նաև Գրիգոր Նարեկացուն։ Նրա ստեղծագործություններում հս կարելի է ցույց տալ բնագիտական-կենսաբանական մեծահարուստ գիտելիքներ։ Զմուանանք, որ նա էլ ե՛ իմաստասեր էր, ե՛ բանաստեղծ։ Տարբերությունը նրանց աշխարհայցքների մեջ է, որը պիտի բացատրվի նրանց ապրած ժամանակների և միշավայրերի միջև եղած տարբերություններով։

Մ. Աբեղյանն ուշագրություն է հրավիրել նաև «Բան իմաստության» պոեմ դրսեորդած սոցիալական մոտիվների վրա, որոնք, իրո՞ք, կան։ Սակայն այսուղ էլ նա վրիպել է՝ ցույց տալով այնպիսի փաստեր, որպիսիք հեղինակի մոտ չկան։ Բայտ Մ. Աբեղյանի Բանաստեղծը (կամ Վարդապետը). իրը թե, գտնում է, որ աստվածաշնչացին հայտնի «մեղքն՝ ինքը չի գործել»։ «Նա չի հասկանում, թե ինչո՞ւ ուրիշների մեղքերի համար ինքը պիտի

72 «Բանը Երեխնի համալսարանի», 1930, № 1, էջ 119։

73 Մ. Աբեղյան, Երկեր, Դ, էջ 75։

պատժից⁷⁴: «Այն միտքը, թե ինքն իբրև մարդ մեղքի տակ է ծնված և բնականից զրկված»⁷⁵, դառնում է մտատանջությունների առարկա և բանաստեղծին մղում ավելի համարձակ մտքերի: «Բանաստեղծը... չի ըմբռնում այն, որ ուրիշների մեղքերի (Աղամա մեղքի և աշտարակաշինության) համար ինքը պիտի պատժի, և մի վայրկյան նա ըմբռստանում է Աղամա մեղքի դեմ և թվում է, թե նա պիտի մերժեր այն: Բայց այդ հնարավոր չէր ԽI դարում՝ առանց ընկնելու թոնդրակեցոց աղանդի մեջ»⁷⁶:

Պիտի նկատել, որ այս բոլորը թյուրիմացության արդյունք է, որովհետև պոեմում ո՞չ բանաստեղծը, ո՞չ Վարդապետը նման տրամադրություն շեն արտահայտում. ընդհակառակը նրանց խոսքը ներծծված է աստվածաշնչային հավատքով: Համողվելու համար ընդօրինակենք Վարդապետի հակաճառության հետևյալ տողերը, որոնք հագեցած են իսկական հավատացյալի կրոնական պատկերացումներով ու առօրյա ապաշխարանքի դրվատմամբ, ինչպես նաև իրեն խանգարող Սարյակի որոշ քննադատությամբ:

Յանապատի աստ զամ նըստիմ, զի օգտնցայց հանդարտութեամբ,
Ասացից և իմացայց զի մի՛ եղէց ընդհայրատանջ,
Աշխատեցայց անշահաբար ունախնասոյցը աստանդութեամբ,
Բազմադիմի վնասուն ձրգմամբ, որ հանդիպի ի մէջ մարդկան:
Դու նեղես զիս անձանձիր՝ որպէս գրտեալ յինէն վընաս,
Դատախաղես աղաղակաւ՝ որպէս օրէնն է զըրկելոց,
Ատենարար առ զատաւորն սաստիկ վինէն ամբաստանես
Կամ թէ կարծես զիս թըշնամի՝ օտարապէս քեզ մարտուցեալ,
Զորմէ սիրեմրդ տըրտընջեմ, զի աստ կրեցի զոր ասացիդ,
Նաև այսու ևս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ,
Յոլով ժամբս պարապեալ ի զրով ձեռին բդքէն տրտունջ.
Ըզկարենորսն մոռացեալ, որով ապրէ անձն ու մարմին,
Ըզմերձն առ նոյնըս խափանեալ, որով լինի իմաստնանալ,
Զուգել մեծաց և անուանեաց, նաև վերին իսկ զօրութեանցն...

Այսինքն՝ ես անապատն եմ նախընտրել, կամովին զրկվելով առօրյա պիտքերից, մերձավորներից, զու եկել՝ խանգարում ես ինձ քո անվերջանալի «աղաղակաւ», ինձ կարծելով քեզ թշնամի:

Ստեղծագործական հնարանքների թելադրանքով երբեմն էլ Վարդապետն է հանդիմանում Սարյակին, դարձյալ հավատարիմ քրիստոնեության դոգմաներին: Հիշենք «Վասն Անշկէին...» հատվածը.

Այլև զայծմուս իսկ պատահումն ոչ լրացից արտարիւի,
Ըզնախահօրն փոխազգեստն որ յետ յանցմանն ընձեռեցաւ
Ապացոյց մեռելուրեանն և գուշակիչ ունակուրեան,
Ըզվերաւկոս ինձ համունակ զայս արարեալ դու անպիտան,
Զի ի նո բանսդ անդ բզբաղմամբ ներկեաւ սաստիկ այս մելանաւ:

74 Նույն տեղում, էջ 79:

75 Նույն տեղում, էջ 78:

76 Նույն տեղում, էջ 80:

Այս մեղադրանքով նա կամենում է Սարյակին ասել, որ նրա պատճառով ինը չզայնացել է, շփոթվել և թանաքը թափել՝ իր մաշկեղեն վերարկուի վրա: Այն վերարկուի, որն աստված էր տվել Աղամին, դրախտից արտաքսվելիս իբրև վերակենդանանալու, վերածնվելու խորհրդանշան: Ավելացնենք, որ այս միտքն էլ Հովհաննես Սարկավագը վերցրել է Փիլոնից: Վերջինս դրան անդրադարձել է «ընդէ՞ր աստուած պատմունանս մաշկեայս առնէ Սղամայ և կենցն, և զգեցուցանէ զնոսա»⁷⁷ և թախորագրի տակ:

Մ. Արեգյանը, կամենալով իր կարծիքը նաև ուրիշ ժամաների օգնությամբ հիմնավորված տեսնել, գրում է. «Դժբախտաբար մեզ չեն հասել Սարկավագ Վարդապետի ուրիշ բանաստեղծությունները, որ տեսնեինք, թե ինչպես է զործադրել նա իր տեսությունը»⁷⁸: Պետք է ասել, որ հետո լույս է տեսել հեղինակի մի նոր տաղը, որի մեջ նա հանդես է գալիս ոչ թե Աղամա մեղքի դեմ, այլ որպես աստվածաշնչացին նույն զոգմաների հավատարիմ պաշտպան ու քարոզիչ: Ահա որոշ տողեր այդ բանաստեղծությունից:

Յիսո՞ւս, Հաւը միածին, զուգապատիւ և գոյակից, բան և ծնունդ...

Հա՞ս յակնուրին վշտազնելոյս յախտից մեղաց և շարուրեան,

Արա՛ արժանի ողորմուրեան զանձամբ բնդրողս կորսաեան.

Նախնոյն հետողի եղէ ծնունդ՝ հաւը հանկունակ աւինազանց.

Նոյն անեցեալ յիս շարուրին յօգնապատիկ ի սպանողէն...

Ծանեա՛ այժմ զուգանս մոլորուրեան յետ վտանգի աղբասուրեանս,

Ի քեզ դիմեցի, Հա՛յր քարեգութ, ամենառատ, Տէր սեղանոյ իմաստութեան, Խնայեա՛ յիս քաղցրութեամբ աստուածայնով՝ որպէս յորդին յայն անառակ յանմտաց,

Նորո՞վ պատմունաւ զիս զարդարեա և մատանեաւ հայրականաւ.

Դոզամ զարհուրագին յորժամ յիշեմ զփարթամութեանն զհայրենեացն իմոց վատնումն...»⁷⁹:

Իսկ եթե դիմելու լինենք Հովհաննես Սարկավագի դավանաբանական բնույթի ստեղծագործություններին և ազոթքներին, էլ ավելի կհամոզվենք նրա ունացած նույն պատկերացումների անհողողության հարցում: Տեսականորեն կարելի է ընդունել անգամ, որ թոնդրակեցիական մտքեր կարող էին լինել Վարդապետի հակածառություններում, սակայն, դրանք Հովհաննես Սարկավագին վերագրվել չեն կարող, որովհետև նրա զաղափարախոսը Սարյակն է, իսկ քննադատելի կերպարը՝ Վարդապետը՝ մեղավոր մարդկության ներկայացուցիչը:

Սոցիալական տրամադրություններ կան Սարյակի՝ որպես իրականությունը բննադատողի մոտ, շափած քրիստոնեական մահացու մեղքերի տարողունակ ըմբռնումների վրա: Դրանք էլ վերաբերում են առհասարակ բոլոր ժամանակներին: Ահա մի նմուշ, համապատասխան զրվագից, ուր Սարյակը մեղազրում է մարդկությանը՝ Աղամի և աշտարակաշինության հանցագործությունների պատճառով:

77 «Փիլոնի նբայիցայ Մնացորդը ի Հայս», Վենետիկ, 1826, էջ 35:

78 Մ. Արեգյան, նշվ. աշխ., էջ 75:

79 Ա. Արքանամյան, նշվ. աշխ., էջ 325—326:

Աստուածութեանը ցանկացայք, զոր ունէի՞՝ զայն կորուսէք,
Յերկինս ելանելով՝ մերձ առ դժոխըս սողացէք,
Չենարեկելով առ նոխանալ՝ աղբատացայք և տնանգացայք,
Առ գերակայսն ամբառնալով կործանեցայք ի ստորին վայրս,
Առ մեծ փառս դիմեցմամբ՝ վեշոտնեցայք աստ առ մեզ...
Փուշ և տատասկ ձեզ՝ փոխարէն, զի չփրեցէք բզփափկութիւնն,
Մահու վնիո ձեզ՝ նատուցումն, զի շախործէք բզկեանս անեղծ...

Այս տողերում տոկա ընդհանրացումների մեջ կարելի է տեսնել աստվածամարտ բոլոր ուժերի գաղափարական խտացումը, որոնք, սակայն, Հովհաննես Սարկավագին վերագրվել և նման մի այլ տեսքով կոնկրետանալ շնչ կարող:

Ահա թե ինչպիսի թյուրիմացություններ են ծնվել «Բան իմաստության» պոեմի շոշափած հարցերի առաջին խմբի մեկնաբանությունների ժամանակ՝ այն պատճառով, որ նրա հիմքում ընկած սկզբնաղբյուրները պարզաբանված շնչ եղել: Ըստ երեսութիւն, այդ հարցում ակամայից դեր են խաղացել 1940-ական թվականներին եղած սոցիոլոգիական սխալ հայացքները, ինչպես նաև հայկական վերածննդի գաղափարն ավելի ամուր հիմքերի վրա դնելու պահանջը: Ինքը՝ Արեգակն այդ պոեմին անզրադարձել է հատկապես վերջին հարցը հիմնավորելիս⁸⁰:

Ե. «Բան իմաստության» պոեմում բարձրացված հարցերի երկրորդ խումբը

Պոեմում որոշակի սահման չկա առաջին և երկրորդ խմբերին վերաբերող հարցերին հատկացված հատվածների միջև: Այն ընկած է միջին մասերում, որտեղ հեղինակն աստիճանաբար շնորհների և արվեստի հարցերից անցում է կատարում զեպի այս երկրում մարդկանց ու կենդանիների համատեղ գոյատեման և ներքին հակամարտությունների հարցերը: Այդուամենայնիվ, կարելի է ասել, որ հարցերի երկրորդ խումբը «Վասն լեշկէին...» հատվածից արդեն սկսվում է, իսկ հաջորդ՝ «Համ պատասխանէ ամբատանաբար առ վարդապետն» հատվածն ամբողջապես նվիրված է դրան: Վարդապետն այսպիս է սկսում իր խոսքը Սարյակի այդ ամբատանականի կապակցությամբ:

Դարձաւ պատասխանեաց բոլոր բանիցո ասացելոց
Երագագոյն քան զոր լրաւն, ապարանեաց հագներգութեամբ.
Ծանոյց ինձ հաւատեաւ կորովակի արտադրութեամբ
Գիմաստը խորհրդոց մեզ բնդ միմեանը բնակութեան:

Ահա բուն հարցը, որից էլ ճյուղավորվում են ենթահարցերը: Ի՞նչ է նշանակում այդ համատեղ գոյակցությունը, ինչո՞ւ են դրանում մեղավոր մարդիկ, ինչպես են տուժել նրանք և կենդանիներն այդ մեղավորության պատճառով, որքա՞ն ծանր է կենդանիների միճակը՝ մարդկանց հալածանքներից, և ինչքա՞ն մեղավոր են նրանք կենդանիների առջև: Կենդանիների և մարդկանց համատեղ գոյակցության հարցի մասին Սարյակն այսպիսի պատասխան է տալիս, դիմելով Վարդապետին.

⁸⁰ «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1944, № 1—2, էջ 31—60:

Լուսը և դու իմոց բանից, արդարախօս դատեցելոյս,
Իմ և ձեր է այս աշխարհ, յորում և դուք էք պանդրխտեալ.
Ընտանի և սեփական ըստ որում էրրն ընակութիւն
-ի յարարչէն մեզ աւանդեալ՝ տեղի ուսման և աճեցման.
Յարմարական մեզ առ ի պէտք՝ որպէս ունիմք ըզկազմութիւն.
Դուք ըզձերըն տուժեցայք՝ վասն յանցման առ արարչին...
Առ մեծ փառքն ոիմեցմամբ՝ վերջունեցայք ա՛ստ, առ մեզ...

Այսինքն՝ մարդիկ հանցանք գործելով, դրկվել են դրախտից և պատժվելով երկիր եկել կենդանիների հետ նրանց բաժին տարածքում ապրելու: Մ' ո՞ւ
է այդ հանցանքը: Նորից Աղամի և աշտարակաշինության մեջքերը.

Աստուածութեանըն ցանկացայք, դոր ունեիք՝ զայն կորուսէք,
Յերկինս ելանելով՝ մերծ առ դժոխուս սողացէք...
Այդ մեղքերի պատճառով, ըստ Սարյակի, տուժել են ոչ միայն մարդիկ,
այլև իրենք՝ կենդանիները.

Արդ մեզ և ձեզ առհասարակ եղէք զըտիշը կորրստեան,
Զի և ընդ մեր իսկ տուժանաց պարտիք համար տալ արարչին:
Արդ, որտեղից են այս դատողությունները՝ մարդկանց և կենդանիների
համատեղ ընակության վերաբերյալ: Այս հարցին պատասխանելու առումով
կարևոր նշանակություն ունի հետևյալ տողը.

Իմ և ձեր է այս աշխարհ, յորում և դուք էք պանդրխտեալ...
Այս տողի համաձայն մարդիկ և կենդանիներն այս աշխարհում պան-
դրխտներ են: Պարզվում է, որ այս միտքն էլ առնված է Փիլոն Աղեքսանդրա-
ցուց: Եվսերիոս Կեսարացին, թվարկելով Փիլոնի երկերը, նշում է. «Է նորա և
նառ վասն պանդխտութեան»⁸¹: Բայ այդմ, Փիլոնի երկերի մեջ հանդիպում
ենք այսպիսի ենթախորագրի. «Ընդէ՞ր ասացաւ... պանդուխտ լիզի զաւակ չո
յերկիր ոչ յիւրում»: Այս հարցին հաջորդում է հետևյալ պատասխանը. «...զի
մարդկան աղդ ընակեալ է յայլոյ երկրի քանզի ամենայն որ ընդ երկնաւ է՝
Աստուծոյ սուացուած է. և որ են ի սմա կենդանինիս, իսկապէս և րուն պան-
դրխտանալ առաւել յիրաւի ասացին, քանզի ընակել յիւրեանց աշխարհ ընու-
թեամբ ոչ ունին...»⁸²:

Հովհաննես Սարկավագի՝ Փիլոնից օգտված լինելը հաստատվում է նաև
հետևյալ փաստով: Բանաստեղծը՝ Սարյակի միջոցով կենդանիների անունից
ասում է.

Բայց և անմեղքը վնասեցաք վասն ձերով ծրաբենութեան.

Ի փառք ձեր մեք գոյացեալք և փառք ձեր ապականեալք...

Ինչո՞ւ են աստծու պատգամներին հավատարիմ մնացած կենդանիները
ևս պատժվել. չէ՞ որ նրանք անմեղ են: Այս հարցի պատասխանն էլ գտնում
ենք Փիլոնի մոտ, որը հարց է տալիս. «Ընդէ՞ր սպանացեալ զմարդն ջնջել,
և զանասունսն ընդ նմա ապականել... բանզի զի՞նչ մեղանչէին անասունին»⁸³,

81 «Եսերիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877, էջ 116:

82 «Փիլոնի Երայեցոյ Մնացորդը ի Հայոց», Վենետիկ, 1826, էջ 181: Այս կրոնական
սկանդալության դադարի մասին տե՛ս մե՞ր հոդվածը «Պատմա-քանասիրական հանդեսի»
1980 թ. հ. 4-ում (էջ 278—287. Հատկապես՝ էջ 278—282):

83 Այսուհեղ նկատի են առեված Աստվածաշնչի հետևյալ տողերը. «Եւ չնչեաց զամենայն
հասակ որ էր ի վերայ երևաց երկրի, ի մարդոյ մինչեւ յանասուն և ի ոսղոց մինչեւ ի Քաջուա-
յրկնից» (Մնունդը, էջ 23):

և պատասխանում. «զի ոչ հարկաւորապէս նախկին վասն ինքեանց եղեն անասունքդ, այլ յաղագս մարդկան... որոց ապականելոց, յիրաւի և նոքա ընդ սոսա ապականին...» (էջ 67):

Այս նույն տրամադրությամբ է հարցին մոտեցել բանաստեղծը՝ նաև Քրիստոսի մարդեղության և նրա տնօրինականների մասին գրելիս, երբ Սարյակն առում է. «կեցաք ի մահուանէ», «Ըզմեզ նորոգեցին ընդդիմակօֆ սխալանացն»:

Պոեմում առանձնահատուկ ուշադրություն են գրավում կենդանիների ծանր ու հալածական կյանքին վերաբերող տողերը.

Եւ ԱՎԵՏՔ վրշտագինք պարապատեն բզմեզ յերկրի,

ԽՈՐԾԱԿԻՔ և ԶԼՄԵՐՈՒԽՆՔ և պիտոյից պակասութիւնն,

Յաւք և խօթութիւնք և տարածամ մահու արկուածք...

Պարզվում է, որ այս միտքն էլ է գալիս Փիլոնից, որը խոսելով վերոհիշյալ պանդիտության մասին, ցույց է տալիս այդ պանդիտիստների թշվառ վիճակը. «Արտաքոյ ԶՄԵՐՈՒԽՆՍ, որ հովացուցանեն (իմա՞ սառեցնում, մրսեցնում են, Ա. Մ.), ամառն, որ ԽՈՐԾԱԿԻԽՆՉԱՐ առնէ, քաղց, ծարաւ և այլ բազում ԱՎԵՏՔԸ»⁸⁴: Առկա է նույնիսկ բառապաշարի ընդհանրություն (ընդգծված մեր կողմից. ընազրում նմանների թիզն ավելի շատ է): Դրանք ընդհանուր բնույթ ունեն. վերաբերում են մարդկանց ևս: Պոեմում, սակայն, առկա է բողոք նաև մարդկանց դեմ.

Ի փառք ձեր մեք գոյացեալք և վասըն ձեր ապականեալք

ԱՇ միայն մահուամբ, այլև սաստիկ դանարբութեամբ...

Այսպիսով, մարդուն մեղադրելու հիմքերը կրկնապատկվում են. ընդհանուրին գումարվում է մասնավորը, ուստի և Սարյակը բացականչում է.

Ջըրկումըն մեր՝ ի ձենչ, և դո՞ւք ըզմէնչ ամբաստանէք,

Իրաւա՛մբք դառեցարուք, ըստ հրամանի ըստեղծողին...

Բողոքի այս պարագան սկզբնաղբյուրներում չի հայտնի միակ փաստը՝ Հովհաննես Սարկավագի ավագ ժամանակակից և Անիի միջավայրի զավակ Գրիգոր Մաղիստրոսի հետեւյալ ծաղրառակն է. «Այլ եկն առ մեղ նամակ յանտառէ կեղերչական տրտունչ տոշորեալ սրտի յեղանց, յեղչերուաց և ի բոլոր գաղանաց, եթէ ելեալք ի դրախտէն, զմեզ ի մերոյն սեփականէ արտաք հանին, իսկ Դաւթայ մեզ ի լերինս հրամայեալ կալ, այժմ և անտուստ հալածեն»⁸⁵:

Պետք է նկատել, որ Հովհաննես Սարկավագի գրչի տակ այս երգիծական բնույթի բողոքը վեր է ածված իսկական բողոքի:

Այսպիսին է ընդհանուր գծերով «Բան իմաստության» պոեմի մոտավոր պատկերը: Այստեղ էլ հաղթանակը տանում է Սարյակը՝ ուստի և Հովհաննես Սարկավագն իր պոեմն ավարտում է ընդհանուր հաղթանակի դրվատանքով.

84 «Փիլոնի Մնացորդը ի Հայու», էջ 181—182:

85 «Գրիգոր Մաղիստրոսի Քղթերը», հրատ. Ա. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 91: Այդ կապակցությամբ տե՛ս Ա. Մեացականյան, «Գրիգոր Մաղիստրոսի «Առ Հայրն Վարագայ» թուղթը», «Երաբեր», 2002 Գլ. համ. բաժնմունքի, 1979, № 1, էջ 70:

Ճշմարտի զայս խօսեցաւ ըստ պատահմանցըն հանդիպման,
Ըզբացատրեալ հոյլը բանից իմաստաբար բարբառելով,
Որով յաղթեալ մե՛զ՝ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս,
Լրութեամբ յանդիմանեալ, ո՞չ կարօտեալ երկար բանից:

Ի՞նչ է ստացվում վերջին հաշվով. այն, որ «Բան իմաստության» պոեմում, իրո՞ք, մշակված է մի թարմ թեմա՝ մարդու և բնության հարաբերության հարցը. այսությունը ի դեմս Սարյակի, արվեստների սկզբնազրյուրն է, որից սովորել ու սովորում է մարդկությունը, բ) Մարդկությունն անարդար է, որ հալածում է բնության ստեղծագործ ուժերին: Այս հարցադրումների ելակետը հին հեթանոսական պատկերացումներն են՝ հեղինակի իմացությունների և անմիշական դիտողականությունից արված համոզմունքների հետ միասին, իսկ բացատրությունը՝ քրիստոնեական-աստվածաշնչային առասպելներն ու դոգմաները:

Ո՞րն է եղել հեղինակի բուն նպատակը. լոկ այդ իրողությունների բացայտումն ու խորացո՞ւմը, թե՞ նաև համապատասխան դիտական, սոցիալական հարցերին անուղղակիաբար, բայց անհրաժեշտաբար անդրադառնալը: Եթե զործ ունենայինք հեղինակի դիտափիլիսոփայական աշխատության հետ, հիմնականում պիտի բավարարվեինք այդքանով, միաժամանակ նկատի ունենալով այդպիսի աշխատանքների ընդհանուր հասարակական նշանակությունը: Տվյալ դեպքում, սակայն, երբ քննության առարկան մի բարձրարվեստ պոեմ է, այսինքն՝ փիլիսոփայական հայացքները գեղարվեստական խոսքի միջոցով մարմնավորող ստեղծագործություն, այն էլ այլարանական գաղափարների հարուստ օգագործմամբ, կամա թե ակամա, պիտի մտածենք անհամեմատ լայն ու համակաղմանի ընդգրկումների մասին: Եթե անգամ հեղինակը շափակոր իսկ եղած լինի այդ ընդգրկումների հարցում, միևնույն է, նրա ընդգրկումները պիտի գնահատին օգտագործված սկզբնազրյուրներում շոշափված, ինչպես նաև պատմական իրականության առաջադրած առաջնահերթ հարցերի ընդհանուր գումարի համաձայն: Միշտ էլ նման դեսպերում վճռորոշը՝ կյանքի առաջադրած հուզող հարցերն են, որոնք և պահանջում են իրենց թելադրանքով աշխարհ եկած երկերն ուսումնասիրելիս նկատի առնել և իրենց: Զմոռանանք, որ բանաստեղծն ապրել է ոչ միայն Անիի միջավայրում, այլև երկրին հասած աղետաբեր ժամանակներում:

Այսպես մոտենալով հարցին կարող ենք ասել, որ «Բան իմաստության» պոեմի մեջ ըննված արվեստի հարցերը ծնվել են Անիի միջավայրում զարգացած մշակութային ընդհանուր նվաճումների հիման վրա: Աշխարհայացքային այն փոփոխությունները, որ նկատել ու գնահատել է Մ. Արեգյանն այդ ժամանակների հայ իրականության մեջ, այն պարարտ հողն էին, որի վրա ծլարձակել է սարկավագյան տեսությունը՝ ընությունից սովորելու մասին: Եվ պատահական չէ, որ այդ դարերում ծնված երաժշտական եղանակների անունների շարքում անդ ունեն նաև թոշունների անունները: Դրանք, ինչպես նաև ընության այլ ուժերի վերաբերող երաժշտական եղանակների կամն այդ տեսության հետ (կամ վերջինիս կապը դրա հետ) անժխտելի է: Բնական է կարծել, որ նրանից առաջ էլ հայ երաժշտագետները պիտի հետեւած լինեին ընության ձայներին⁸⁶: Ինչ վերաբերում է Հովհաննես Սարկավագի երաժշտագիտա-

կան հատուկ դիտելիքներին, որոնք վաղուց են հայտնի և առավել հայտնի դարձան վերջերս⁸⁷: Այսպես, ուրեմն, «Բան իմաստության» պոեմի արվեստագիտական հարցերը ծնվել են իրականության պահանջով և ունեցել տեսական-գործնական առաջնահերթ նշանակություն:

Ավելի բարդ է պոեմում քննված երկրորդ խմբի հարցերի և իրականության առնչությունների բացահայտման խնդիրը: Այն իր ուղղակի առումով, ընության նկատմամբ գութ շարժելու և նրան պաշտպանելու գաղափար է՝ ամփոփած գողարիկ տողերի մեջ: Հիշենք Մարյակի տրտունչ-ողբից մի հատված:

Յորս աւելի մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս և քաղաքս,
Ո՞չ համբարբս մըթերեալս՝ ի լիութիւն հարկաւորացն,
Ո՞չ դեղս և ո՞չ բըժիշկս, որով ցաւոց ախտ դադարէ,
Ո՞չ կակուղ ինչ կերակրիկ մեզ՝ ի սփոփանբս դիւրութեան...

Այսանդ՝ իրական թոշունների ողբն է, բոլոր կենդանիների դառն վիճակի պատկերը: Բայց կարելի՞ է ասել, որ այդ ողբն ու դժգոհությունն ուղղված է մարդկության դեմ: Վերեսում Փիլոնի օգնությամբ տեսանք, որ խոսքը, հիմնականում, ընդհանուր ընույթ ունի և վերարերում է նաև մարդկանց ծանր վիճակին (դրախտի համեմատությամբ): Հիրավի, ահա թե ինչպես է Մարյակը նախառում մասողկանց և թվարկում նրանց թշվառ վիճակի մանրամասնությունները.

Փո՞ւշ և տառա՛սկ ձեղ փոխարէն, զի չսիրեցէք ըզփափկութիւնն,
Մահու վրձիո ձեզ հատուցուամն, զի շախորժէք ըզկեանս անեղծ...
Կերակուր ձեղ ի վայրէ՝ որպէս և մեղ երկրակեցացս,
Անասնականբս պարենիկ՝ շիմացողացդ ըզփայելուշն.
Ենդ մեղ կենակցութիւն ձեղ, շրնտրողացը առ Աստուածն,
Առ ժառախ անզուգութիւն՝ զանզուգութիւն մեծարողացդ...

Այս բոլորը մարդկության վիճակին վերաբերելով նաև կենդանիների վիճակին է վերաբերում: Միայն թե կենդանիները համատեղ կյանքից ավելի են տուժել: Ո՞ւմ դեմ է այս բոլորի կապակցությամբ Մարյակի բողոքը, դարձյալ առաջին մեղագործության: Հանցանք, որը միշտ էլ քրիստոնեական պատկերացումներով դատափետվել է, ուստի և դատափետվում է Մարյակի կողմից: Այստաղ բոլորովին էլ չի կարելի տեսնել «բողոք այդ կրոնական հայացքի դեմ,— զրանով լուլլայն և Աղամա մեղքի դեմ»⁸⁸, այն իմաստով, ինչ ընկալված է Մ. Արեգյանի ուսումնասիրության մեջ: Բանաստեղծը Մարյակի միջոցով դատապարտել է ոչ թե Աստվածաշնչային դոգման կամ՝ համապատասխան պատկերացումները՝ քրիստոնեական պաշտամունքի մեջ, այլ՝ մեղանշականության երեսութքը, ինչ որ ընականոն էր միջնադարում: Ավելին, անդամ Վարդապետին ուղղակի հակազրվելիս, նրան Աղամի և աշտարակաշինարարների (նաև բոլոր աստվածամարտ ուժերի) ներկայացուցիչ համարելով հանդերձ, ունի մի նպատակ՝ փրկել նրան, օգնել բարձրանալու դեպի նախկին փառքը, որովհետեւ միայն այդ եղանակով է, որ կփրկվի նաև կենդանական աշխարհը (մարդկության ժառաները): Այս միասնության մեջ է պոեմի քրիստոնեական

⁸⁷ Այս առումով հատուկ ծառայություն է մատուցել Ն. Թահմիզյանն իր վերնում հրատարակման ուսումնասիրությամբ («Բազմավեց», 1978, № 3—4, էջ 328—356):

⁸⁸ Մ. Արեգյան, Երկեր, Դ, էջ 81:

գաղափարապայքարի իմաստը: Ուստի, ինչպես նշեցինք, կրոնական առումով՝ Սարյակը հոգու դերումն է, Վարդապետը՝ մարմնի: Ըստ Փիլոնի՝ պանդըխութության մի այլ փոխարերական իմաստի համաձայն «...նշանակաւ մարդի ի մեջ միտք են, և անասուն զգայութիւնք» (էջ 63), իսկ պոեմում, ըստ Աղեքսանդրի, բնդհակառակը, Սարյակը միտք է, հոգի, իսկ Վարդապետը՝ մարմին, զգայարաններ: Բանաստեղծը, քրիստոնեական կրոնի գաղափարախոս լինելով, չեր կարող ժամանակին իշխող այս պատկերացման դեմ (այն է՝ հոգու գերազանցության դեմ) բացահայտորեն պայքարել: Բայց նա այդ գաղափարին հասել է իրու գիտնական, երբ քննել է իսկական բնության և մարդու հարաբերությունը՝ Աղեքսանդրի դիրքերից: Այստեղից էլ՝ պոեմի գաղափարական երկշերտվածության հարցը, որով և պայմանագործած է Սարյակի գաղափարի երկակիությունը՝ բնական և այլարանական: Նա բնական է, երբ դըրվատվում է բանաստեղծի կողմից, զնահատվում՝ իրու խոսքի, երգի, տաղաշափության, նվագի, պարի տիրապետող՝ սոխակի, ասպուճակի, ճպուի և այլ թոշունների ազգակից և այլն: Միաժամանակ նա այլարանական կերպար է իրու աստվածաբան, քարոզող և կրոնի ուսուցիչ:

«Բան իմաստության» պոեմում Փիլոնից փոխ առնված «պանդիստության» այլարանությունը Փիլոնի մոտ առաջին հերթին կապված է բուն հարցի («Բնդի՞ր ասացաւ պանդուխտ լիցի զաւակ քո...») հետ և ունի մի այլ առում, առանց որի շի կարելի ճիշտ հասկանալ բանաստեղծին: Այդ հարցը «Գործք առաքելոցից» է և վերաբերում է Արրահամ նահապետին: Վերջինիս հետ կապված պատկերացումները հաճախ են օգտագործվել հայ մատենագրության մեջ հայրենասիրական, աղատագրական հարցերի կապակցությամբ: Դեռևս Մեսրոպ Մաշտոցն է այդ միջոցին դիմել հայունի պետության վերականգնման հույսով⁸⁹: Ըստ աստվածային կանխագուշակության՝ Արրահամի զավակներն են, որ պիտի 400 տարի պանդուխտ լինենին՝ ունենալով «տեարս բազում», գտնվելով «ի կոփանս և ի շարշարանս»: Նրանց է, որ օտար բոնակալները պիտի «ծառայեցուացեն և վատթարենցեն և շարշարենցեն», — ըստ Փիլոնի մեկնության (էջ 181—182): Ուստի Հովհաննես Սարկավագն այդ մեկնությունից և նրա հիմքում ընկած «Գործք առաքելոցից» քաջատեղյակ լինելով է, որ խոսել է այլարանական ռազմական ռազմության թշվառ ու ժանր վիճակի, ինչպես նաև նըրանց հալածող ուժերի մասին, որը, ինչ խոսք, նկատի ունի նաև սոցիալական իրողություններ: Այս կապակցութամբ հարկ է հիշել Աղեքսանդրի և Փիլոնի համապատասխան բանավեճերից մի ուշագրավ օրինակ: Առաջինը, զայրացած իրականության մեջ՝ առկա անհավասարությունից, առարկելով Փիլոնին, ասում է, աստվածային ի՞նչ նախախնամության մասին է քո խոսքը, երբ կյանքը լի է խոռվությամբ ու վրդովմունքով: Գուցէ «զու՞ միայն ոչ գիտես, զի շարացն և անզգամացն առատութեամբ ամենայն բարիք զեղանին... իսկ որք... իմաստութեան և առաքինութեան... ուսողք՝... աղքատք, ցականեալք...»: Ինչպես կարելի է «զրել օրէն՝ շարացն և վատացն պատիւս, և լաւացն՝ պատիւս պատուհասի» սահմանելով: Ապա զայրացած նա ասում է, թե նմաններին պետք է «քարկոծ առնել, դառն հատուցանել դատաստան, փոխանակ, զի իշխեաց զբնութեան զարդարն և զբարին» (էջ 45—47): Փիլոնը, սակայն, գտնում է,

89 Ա. Մեացականյան, Մեսրոպ Մաշտոցը որպես բանաստեղծ («Բաներ Մատենագրունտ», 1964, № 7, էջ 144).

թե այդ ամենն աստծու կամքի արտահայտությունն է, որը «Ի ձեռն ինքեան զայն գործէ, սով ի վերայ ածելով, և ժանտախտ, և շարժումն. և կամ որքան միանգամ այլ ինչ աստուածառաք, յորոց ժողովք մեծամեծք և բազմամարդիկ հանապաղօր կորնչին, և բազում մասն աշխարհիս ապականեալ լինի՝ յաղագս յառաջախնամութեանն առաքինութեան» (էջ 71—72):

Հովհաննես Սարկավագը, որ ծանոթ է եղնլ այս գրականությանը և լիցքավորվել է Աղեքսանդրի աղատասիրական, արդարասիրական այդ տրամադրություններով, ձգտել է յուրովի իրականացնել նրա պահանջը. «զի իշխաց զբնութեան զարդարն ու գրաբին»: Պոեմի ամբողջությունից բխող բնության ու մարդկության պաշտպան Սարյակի պահանջը ևս նույնն է՝ «Արդարութեամբ դատեցարուք»: Դա Աղեքսանդրի պահանջի արձագանքն է անցյալի մշտապես անարդար կարգերի դեմ:

Այժմ, երբ պարզված է «Բան իմաստության» պոեմի գաղափարական կապը հեթանոսական և վաղ քրիստոնեական ժամանակների մատենագրության, ինչպես նաև անցյալի դիցաբանական պատկերացումների հետ, բնականարար, հարց է առաջանում՝ որոնել Սարյակի կերպարի նախատիպեր՝ ժողովրդական բանահյուսության մեջ: Փաստորեն առաջադրվում է նոր սկզբնաղբյուրի հարց, որի մասին ցարդ խոսք չի եղել: Այս առումով լոկ կարելի է հիշել Ամփիոն Թերացու, Արիոն Միթեմնացու (մ.թ.ա. 628—538)⁹⁰ և Որիևս Թրակացու առասպելական ու կիսաառասպելական կերպարների մասին Ղ. Ալիշանի և Մ. Աբեղյանի տված տեղեկությունները, որոնք սոսկ նրանց մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակն են հետապնդել: Դա ինքնին խոսում է Հովհաննես Սարկավագի՝ դեպի ժողովրդական բանահյուսությունն ունեցած հետաքրքրասիրության մասին և առավել որոշակի հիմք տալիս՝ Սարյակի կերպարի նախատիպերին ևս այնտեղ, ժողովրդական բանահյուսության բնագավառում որոնելու համար: Ըստ որում, պարտադիր չէ, որ անպայման այն որոնվի սարյակ թոշունին վերաբերող փաստերում. կարևոր որևէ թոշունի կերպարն է՝ համապատասխան դերով, հատկություններով: Նկատենք, որ նմանների թիվը մեծ է և բոլորն էլ մեզ տանում են դեպի տոտեմիզմի ժամանակները՝ կապվելով հետագայում ծնված այնպիսի աստվածությունների գաղափարների հետ, որոնք հանդիսացել են արվեստի ստեղծողներ կամ ցեղերի ու ժողովուրդների պահապան-հովանավորներ:

Այս մոտեցմամբ է, որ մենք կարող կլինենք ավելի լրիվ հասկանալ Սարյակի գաղափարի հետ կապված հարցերը՝ պոեմում: Նա բնական թոշուն է, երբ ներկայացվում է իր մարմնական տկարությամբ՝ դասված «ընդ փանաքիս և աննըշանս», «զի գեղաւ անվայելուշ» և «ըստ հասակի յոյժ անարգիկ»: Նա գերբնական էակ է, երբ երևան է գալիս խոսելու ամենահասկանալիության շնորհը և արվեստի տեսակներն արարողի գերով: Նա քրիստոնեական սքեմի մեջ է, երբ աստվածաբանական դասեր է տալիս Վարդապետին, իրեն ու իր նմաններին համարում «շրնկալողքս զգիտութիւն», «հետեւալքս ըստ բնութեան», «անբանութեամբ պարաւանդեալքս», որպեսզի այս եղանակով կենթեան»: «անբանութեամբ պարաւանդեալքս», որպեսզի այս եղանակով կենթեան»: «անբանութեամբ պարաւանդեալքս», որպեսզի այս եղանակով կենթեան»: «անբանութեամբ պարաւանդեալքս», որպեսզի այս եղանակով կենթեան»:

⁹⁰ Ֆր. Լյուբկեր. Реальный словарь классической древности, СПб.—М., 1888, с. 120.

բում է կենդանական աշխարհի թշվառ վիճակը և պահանջում արդար դատաստան՝ «ծուռ դատավորների» դեմ:

Այստեղ, բնականաբար, նորից է առաջանում այն հարցը, թե ի՞նչ պատճառներ են եղել, որոնք բանաստեղծին մղել են նման ստեղծագործության: Այս հարցի պատասխանը պիտի որոնել, ինչպես նշեցինք, իր ժամանակի իրականության մեջ: Ինչպես հայտնի է, այն ժամանակ երկիրը գտնվում էր օտար լծի տակ և ծանր տառապանքների մեջ: Այդ դառն վիճակից ազատվելու երազանքն է, որ դրսնորված է «Բան իմաստության» պոեմում: Միանգամայն իրավացի է Մ. Աբեղյանը, եղր Հովհաննես Սարկավագի այլ գործերի կապակցությամբ գոռամ է. «Իո ժամանակի թշվառությունը նրա մեջ ևս զորացրել է հայ հայրենասիրական ոգինս⁹¹: Նա մատնացուց է անում այն, թե ինչպես բանաստեղծը մտահոգված է եղել ցոված հայության տունդարձի և ազատության հոգսով. «Հեղմամբ արեան սրբոց նոց հօտապետաց զեկեղեցու նոյն գրուեալ մանկունքս ժողովեա՛ յուրախուրիմ, բզբարատեալս տրամուրեամբ և արտասուաց յուրդանոս բրդիմամբ փրկուրեան մերոյ պարզեաց բաշխօղ»⁹²: Ըստ երեսութին, բանաստեղծի համար ըիշ են թվացել բրիստոնիական եկեղեցու հնարավորությունները, նրա սրբների կարողությունները, ուստի և նա ավելի գործոն, հզոր ուժի գաղափարն է մարմնավորել Սարյակի կերպարում: Եվ եթե նշված աղոթքում նա անցյալից օգնության է կանչում քրիստոնյաց գործիչներից մեծաղոր Տրդատ արքային, ներսես, Սահակ, Մեսրոպ մեծերին, Ղևոնդյանց և Վարդանանց քաջերին, ապա պոեմում դիմում է նաև հեթանոսական ուժերին:

Ընդունենք, որ բանաստեղծը Սարյակի օրինակով հանդես է եկել իր ժողովրդի մեծ հովանավորի դերում: Ավելին, գաղափարական այդ հովանավորությունն իրըն փիլիսոփայական ընդհանրացում տարածված է ողջ մարդկության վրա: Հեղինակի նպատակն է հովանավորված տեսնել երկնքի ներքո գտնվող բոլոր էակներին, նրանց ազատված տեսնել բնության ու հասարակության ճնշող ուժերից, պաշտպան կանգնել համերերային բոլոր զրկվածներին՝ հանուն բնական արդարության, ստեղծագործ աշխատանքի և հոգեսոր ու նյութական բարիքների: Դա մի ամրող փիլիսոփայություն է, որն իրավունք է տալիս հաստատագես պնդելու Մ. Աբեղյանի հայտնած կարծիքը, թե «Բան իմաստության» պոեմը հայկական Վերածննդի արտահայտություն է, վերեւում շարադրված նոր բացահայտումները միանգամայն անառարկի են դարձնում այդ կարծիքը:

ԱՅԱԿՈՒՐ ՄԻԱՑԼԱԿԱՆՅԱՆ

ПОЭМА ОВАННЕСА САРКАВАГА «СЛОВО МУДРОСТИ» И ЕЕ ОЦЕНКА НА ОСНОВЕ ИСПОЛЬЗОВАННЫХ ПОЭТОМ ИСТОЧНИКОВ

Резюме

В настоящей статье впервые делается попытка исследовать поэму выдающегося поэта и философа XI—XII вв. Ованнеса Саркавага «Слово

⁹¹ Մ. Աբեղյան, Երկեր, Դ, էջ 70:

⁹² Նույն տեղում, էջ 71:

мудрости» исходя из использованных автором первоисточников, которые до сих пор не были выявлены, хотя и имелись отдельные наблюдения.

Среди этих источников основное место занимает сочинение «О разуме животных», а также другие сочинения Александра и Филона Александрийского. Доказывается, что автором сочинения «О разуме животных» является не Метродор Скепсийский, а Александр и Филон Александрийский. Поэма «Слово мудрости» исследуется по уточненному нами тексту.

Поскольку по сей день использованные автором первоисточники не были выявлены, то все основные вопросы, затронутые в поэме, и их решения приписывались Ованесу Саркавагу. В действительности же выясняется, что в основе поэмы лежат идеи языческих и раннехристианских времен. В связи с этим некоторые оценки предшествующих исследователей, в частности М. Абеляна, нуждаются в пересмотре.

Поэма в целом является исключительно ценным и высокохудожественным произведением, заслуживающим большого внимания.

A. CH. MNATZAKANIAN

LE POÈME "PAROLE DE SAGESSE, DE HOVHANNES
SARKAVAG ET SON APPRECIATION SELON LES SOURCES
UTILISEES PAR L'AUTEUR

(Résumé)

Cet article est un premier essai d'étudier le poème „Parole de sagesse“, du célèbre poète et philosophe des XI^e—XII^e siècles Hovhannes Sarkavag en se basant sur les sources utilisées par l'auteur, ces sources n'étant pas déterminées jusqu'à présent, bien qu'il y ait eu certaines observations à ce sujet.

Parmi ces sources, une place de choix revient à l'œuvre „De la raison des animaux“ („De ratione quam habere etiam bruta animalia“), ainsi qu'aux autres œuvres de Philon d'Alexandrie et d'Alexandre (neveu de Philon). Il est démontré que l'auteur de l'œuvre „De la raison des animaux“ n'est pas Métrodore de Scopis, mais Philon d'Alexandrie et Alexandre. Le poème „Parole de sagesse“ a été analysé d'après le texte rectifié.

Les sources utilisées par l'auteur n'étant pas déterminées, toutes les questions fondamentales soulevées dans le poème „Parole de sagesse“, et leurs solutions étaient jusqu'à présent attribuées à Hovhannes Sarkavag. A présent qu'il est démontré que ce poème est basé sur les idées de l'époque païenne et paléochrétienne, sa valeur croît considérablement. Les parties du poème où l'auteur se laisse guider par les idées d'Alexandre et leur donne un développement original, sont dignes d'attention.

Il s'ensuit qu'une partie des opinions de M. Abéghian sur le poème en question étaient réellement exactes et profondes, tandis que les autres doivent être revues. Ce poème et les autres œuvres de Hovhannes Sarkavag donnent plus de raisons d'y découvrir des expressions mystiques et propres à la Renaissance que ne l'avait montré M. Abéghian.

Le poème "Parole de sagesse," est une œuvre littéraire d'une valeur exceptionnelle qui mérite un grand intérêt.